

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2016թ. I-իՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2016թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2016թ. I-ին ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

| | | |
|---|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | | 3 |
| 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | | 4 |
| 1. | ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ | 8 |
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ | 10 |
| 2.1. | Կրթություն | 10 |
| 2.2. | Մշակույթ և սպորտ | 13 |
| 2.3. | Առողջապահություն | 15 |
| 2.4. | Սոցիալական պաշտպանություն | 22 |
| | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 26 |
| 3.1. | Գյուղատնտեսություն | 26 |
| 3.2. | Բնապահպանություն | 28 |
| 4. | ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ | 32 |
| | ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ | 34 |
| 5.1. | Ճանապարհաշինություն | 34 |
| 5.2. | Ջրամատակարարում ու ջրահեռացում | 35 |
| 5.3. | Գազամատակարարում | 37 |
| 5.4. | Էներգամատակարարում | 38 |
| 6. | ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ | 38 |
| 7. | ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 40 |
| 8. | ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ | 47 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2014-2017թթ. ՄԶԾ շրջանակներում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2016թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ

Կառավարության 2014թ փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ:

ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- ❖ Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- ❖ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- ❖ Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- ❖ Քաղաքաշինություն,
- ❖ Ենթակառուցվածքներ(ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- ❖ Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- ❖ մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում, տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

2016թ. I-ին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները

տրամաբանական հենքում:

- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄԶԾ մոնիտորինգի համակարգը:

Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄԶԾ ութ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն», «Արտաքին կապեր և միջազգային կազմակերպություններ») 2016թ. ՏԱՊ-ով նախատեսված և I- ին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի 2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. I-ին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. I-ին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ:

2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ Լոռու մարզի 2014-2017թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կարիքների գնահատման՝ անհրաժեշտ գումարը 2016թ. եղել է **36,222,922.0** հազ. դրամ: 2016թ. ՀՀ ՏԿԶՀ նախարարի կողմից հաստատված ՏԱՊ-ով պլանավորվել էր կատարել **9,069,535.4** հազ դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝

| | |
|--|--|
| ➤ ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ | 4,610,210.4 հազ. դրամ, այդ թվում՝ |
| Սեփական միջոցներ՝ | 3,222,710.4 հազար դրամ, |
| Վարկային միջոցներ՝ | 1,387,500.0 հազար դրամ, |
| ➤ Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ | 23,625.0 հազար դրամ, |
| ➤ Համայնքային բյուջեների ներդրումներ՝ | 280,100.0 հազար դրամ, |
| ➤ Մասնավոր հատվածի ներդրումներ՝ | 2,575,000.0 հազար դրամ, |
| ➤ Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ | 1,580,600.0 հազար դրամ: |

Սակայն 2016թ.-ին փաստացի (ճշգրտված) պլանավորվել է կատարել 32,478,919.0

| | |
|--|--|
| ➤ ՀՀ պետական բյուջեի հատկացումներ | 6,636,710.4 հազ. դրամ, այդ թվում՝ |
| ✓ Սեփական միջոցներ՝ | 3,488,210.4 հազար դրամ, |
| ✓ Վարկային միջոցներ՝ | 3,148,500.0 հազար դրամ, |
| ➤ Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ | 2,140,825.0 հազար դրամ, |
| ➤ Համայնքային բյուջեների ներդրումներ՝ | 547,783.6 հազար դրամ, |

- Մասնավոր հատվածի ներդրումներ՝
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝

2,575,000.0 հազար դրամ,
20,578,600.0 հազար դրամ:

Աղյուսակ 1.-ում բերված են 2016 թվականին ՀՀ Լոռու մարզում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացված աշխատանքների ծավալներն ըստ բնագավառների: Ավյուսակ 2.-ում բերված են ՀՀ Լոռու մարզի 2016 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների:

**ՀՀ Լոռու մարզի 2016 թվականի I-ին կիսամյակի զարգացման ծրագրի
ֆինանսավորումն ըստ բնագավառների**

*Աղյուսակ 1
հազ.դրամ*

| Հ/Հ | Ոլորտի անվանումը | 2016թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում | | Իրականացված է 2016թ., I-ին կիսամյակ այդ թվում | | |
|------|--|--|---------------------------------------|---|---------------------------------------|-----------------------------|
| | | Ընդամենը | 2016թ. I-ին կիսամյակ Պետական բյուջեից | Ընդամենը | 2016թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ | |
| | | | Ընդամենը | | Ընդամենը | Այդ թվում՝ հրատապ ծրագրերով |
| 1. | Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված | 3,774,925.0 | 1,176,300.0 | 1,236,199.0 | 1,222,000.0 | |
| 2. | Սոցիալական ոլորտներ | 5,828,104.0 | 3,338,504.0 | 1,125,400.0 | 420,400.0 | |
| 2.1 | Կրթություն | 3,113,600.0 | 1,622,000.0 | 705,000.0 | 60,000.0 | |
| 2.2 | Մշակույթ և սպորտ | 616,504.0 | 616,504.0 | 10,400.0 | 10,400.0 | |
| 2.3 | Առողջապահություն | 2,098,000.0 | 1,100,000.0 | 410,000.0 | 350,000.0 | |
| 2.4 | Սոցիալական ապահովություն | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | |
| 3 | Գյուղատնտեսություն | 96,500.0 | 96,500.0 | 0,00 | 0,00 | |
| 4 | Բնապահպանություն | 52,506.40 | 52,506.40 | 0,00 | 0,00 | |
| 5 | Քաղաքաշինություն | 60,000.0 | 60,000.0 | 172,998.0 | 89,698.0 | |
| 6. | Ենթակառուցվածքներ | 22,164,840.0 | 1,563,500.0 | 597,977.0 | 2,000,0 | |
| 6.1. | Ճանապարհաշինություն | 18,586,650.0 | 231,500.0 | 114,063.0 | 0,00 | |
| 6.2. | Զրամատակարարում | 2,949,200.0 | 1,332,000.0 | 370,800.0 | 2,000.0 | |
| 6.3. | Գազամատակարարում | 589,000.0 | 0,0 | 74,157.0 | 0,0 | |
| 6.4 | Էներգամատակարարում | 39,990,0 | 0,0 | 38,957.0 | 0,0 | |
| 7. | Արտակարգ իրավիճակներ | 502,043.6 | 349,400.0 | 19,154.0 | 0,0 | |
| | Ընդամենը | | | | | |

**ՀՀ Լոռու մարզի 2016 թվականի I-ին կիսամյակի զարգացման ծրագրի
ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների**

*Աղյուսակ 2.
հազ. դրամ*

| Հ/Հ | 2016 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների | 2016թ. ՏԱՊ-ով նախատեսված ֆինանսավորումը | Իրականացված է 2016թ. I-ին կիսամյակի ընթացքում |
|----------|--|---|---|
| | Ընդամենը մարզում, այդ թվում՝ | 32,478,919.0 | 3,151,728.6 |
| 1 | ՀՀ պետական բյուջե՝այդ թվում՝ | 6,636,710.4 | 1,734,098.0 |
| | սեփական միջոցներ | 3,488,210.4 | 512,098.0 |
| | վարկային միջոցներ | 3,148,500.0 | 1,222,000.0 |
| 2 | Միջ.կազմ.և դոնորներ | 2,140,825.0 | 910,799.0 |
| 3 | Համայնքային բուջե | 547,783.6 | 192,174.6 |
| 4 | Մասնավոր ներդրողներ | 2,575,000.0 | 7,500.0 |
| 5 | Այլ աղբյուրներ | 20,578,600.0 | 307,157.0 |

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2014-2017թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատումը կազմել է **21,072,800.00** հազ.դրամ, այդ թվում ըստ ոլորտների՝

| | |
|------------------------------|-------------------------------|
| Հանքարդյունաբերություն | 10,250,000.00 հազ.դրամ |
| ❖ Էներգետիկա | 9,303,600.0 հազ.դրամ |
| ❖ Մշակող արդյունաբերություն | 1,519,200.0 հազ.դրամ |
| ❖ Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 0,00 հազ.դրամ |

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում պլանավորված ներդրումների գերակշիռ մասը հանքարդյունաբերության, էներգետիկայի և մշակող արդյունաբերության ոլորտներում է:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է **3,774,925** հազ.դրամ: 2016 թվականի I-ին կիսամյակում մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների մասնավորապես «Սարտոն» ՍՊԸ- կողմից իրականացվել է ընդամենը **7,500.00** հազ դրամի ներդրումներ: Թումանյան աշխարհ զբոսաշրջության կենտրոնը միջազգային կազմակերպությունների միջոցով կատարել է շուրջ **6,699.0** հազ.դրամի ներդրում և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման համար ներդրումը կազմել է շուրջ **1,222,000.0** հազ.դրամ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2016թ. ՄՁԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, որ շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
 - ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
 - ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:
- Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:
- ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2016թ. I-ին կիսամյակի ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ թիրախային աջակցությունները՝
- ✓ Ուսուցողական աջակցության ծրագրեր/տարեկան թիրախներ
 - ✓ Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրեր/տարեկան թիրախներ
 - ✓ Տեղեկատվական աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին
 - ✓ Միջազգային համագործակցության ծրագրեր/տարեկան թիրախներ

Ստորև բերված են 2016թ. I-ին կիսամյակի ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի գործունեության շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը՝ ըստ աջակցության ծրագրերի

| | | |
|---|---|-----|
| 1 | Անհատական և /կամ խմբային խորհրդատվության տրամադրում (թեժ գիծ) գործարարներին հարկային և մաքսային օրենսդրության վերաբերյալ: | 657 |
| 2 | Խորհրդատվական սեմինար / հարկային օրենքների պարզաբանում | 72 |
| 3 | Արտահանման խթանմանն վերաբերյալ խմբային հանդիպում | 24 |
| 4 | Կանանց մրցանակաբաժխությանն ներկայացրած հայտ | 19 |

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. տարեկան աշխատանքային պլանի՝ մարզի կրթության ոլորտում շարունակվել է

Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը:

Դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազննման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների ատեստավորման, մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների կառավարման մեխանիզմների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման գործընթացները դիտվել են որպես առաջնահերթ:

Ուշադրության կենտրոնում շարունակվել է մնալ ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և կառավարման մեխանիզմների կատարելագործումը, հաշվետվողականության համակարգի և գործունեության թափանցիկության բարելավումը, դպրոցների կողմից սահմանված կարգերի (օրենք, կառավարության որոշում, նախարարի հրաման և այլն) հստակ պահպանումն ու կիրառումը:

2016թ-ի առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 150 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:
- Կազմակերպվել է Մարգահովիտի միջնակարգ դպրոցին ամրացված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու գործընթացը:
- ՀՀ պետական հանրակրթական դպրոցներն ըստ սեյսմիկ խոցելիության դասակարգելու նպատակով պահանջվող տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն:
- Կազմակերպվել է Պաղարքյուրի և Մեծավանի N 2 միջնակարգ դպրոցների միացման ձևով վերակազմակերպման գործընթացը:
- 2016թ. հունվար-փետրվար ամիսներին համակարգվել է մարզի 357 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքների գործընթացը, մասնավորապես, ցուցակների կազմում ըստ մասնագիտությունների, համագործակցություն կրթության ազգային ինստիտուտի մարզային մասնաճյուղի հետ՝ պարզ ընթացակարգով ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, ինչպես նաև 2017թ-ից մարզում իրականացվելիք համընդհանուր ներառական կրթության անցնելու ծրագիրն իրականացնելու համար:
- ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2016թ. մարտի 29-ից ապրիլի 15-ը կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում և մարզային ենթակայության թվով 150 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ:

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ և թերություններ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր տեղեկանք: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ուսումնական հաստատությունների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

- ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2016թ. մայիսի 9-13-ը ՀՀ կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով ուսումնասիրություն է իրականացվել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնում, ինչպես նաև ապրիլի 25-ից մայիսի 6-ը՝ համայնքային ենթակայության թվով 20 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Ուսումնասիրության և ստուգումների արդյունքների մասին տեղեկացվել է ՀՀ Լոռու մարզպետին, Վանաձորի քաղաքապետին ներկայացվել են առաջարկություններ հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

- Կազմակերպվել է միասնական քննություններին մասնակցող 930 շրջանավարտների հայտագրման գործընթացը, իրականացվել է մարզի դպրոցների ավարտական, պետական ավարտական քննությունները և գիտելիքների ստուգումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից: Ընթանում է պետական ավարտական և ավարտական քննություններից անբավարար գնահատված և վերաքննության իրավունք ունեցող սովորողների հաշվառման և ԳԹԿ ներկայացման գործընթացը:

- 2016թ. հունվար-մայիս ամիսներին կազմվել և ԿԳ նախարարություն է ներկայացվել 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի կոմպլեկտավորումը, 2016-2019թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտը, 2015-2016 ուստարվա 12-րդ դասարանի շրջանավարտների անվանացանկը և 9-րդ դասարանցիների տվյալներն ըստ քննական առարկաների, 2015-2016 ուստարվա գովասանագրերի, վկայականների և ատեստատների հայտը: Կազմվել է շուրջ 40 միջնորդություններ ատեստատների և վկայականների կրկնօրինակներ ստանալու համար:

- Պատշաճ մակարդակով կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը: 2016թ. դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին ՀՀ Լոռու մարզից մասնակցել է թվով 115 աշակերտ, որոնցից 35-ը դարձել է հանրապետական փուլի տարբեր կարգի մրցանակակիր:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաներում հաջողության հասած աշակերտները խրախուսվել և հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են Լոռու մարզպետի կողմից:

- 2016թ-ի մայիսի 24-26-ը կազմակերպվել է «Դիպուկ հրաձիգ» մրցույթի առաջին՝

դպրոցական փուլը:

- Կազմակերպվել և ամփոփվել են «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների մարզային փուլի արդյունքները: Լավագույնները մասնակցել են հանրապետական փուլին:
- 2016 թվականի մայիսի 31-ին կազմակերպվել և անց է կացվել «Ամենախելացին» հեռուստանախագծի երրորդ եթերաշրջանի ընտրական փուլի աշխատանքները Լոռու մարզում:
- 2016թ-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում Լոռու մարզում անց է կացվել «Իմ ներառական դպրոցը», Հայոց բանակի 24-րդ տարեդարձին նվիրված «Կյանք արժեցող խաղաղություն» խորագրերով շարադրությունների մրցույթների մարզային փուլերը, և լավագույն աշխատանքներն ուղարկվել են ԿԳ նախարարություն:
- Նախապատրաստվել և ԿԳ նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ ուսումնական հաստատություններում ահաբեկչության դեմ պայքարի կրթադաստիարակչական աշխատանքների կատարման և բնական ու տեխնածին աղետներից պաշտպանվելու համար համապատասխան ստորաբաժանումների ստեղծման և պարբերական հրահանգավորման, քաղպաշտպանության միջոցառումների համակարգի, բաց դասերի, ուսումնավարժությունների և տարհանումների վերաբերյալ:
- Բոլոր ուսումնական հաստատություններում իրականացվել է «Դասը վարում է ոստիկանը» միջոցառումը:
- Պարբերաբար ամփոփ տեղեկատվություն է ներկայացվել նաև մարզի ուսումնական հաստատություններում թմրամոլության կանխարգելման նպատակով քարոզչական աշխատանքների, դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների և վնասակար այլ նյութերի շրջանառության կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:
- Ապահովվել է մարզի գյուղական համայնքների դպրոցների ընդգրկումը «Dasaran.am» կրթական ծրագրում, ինչպես նաև վերահսկողություն է իրականացվել ծրագրի շրջանակներում դպրոցների կողմից իրականացվելիք գործառույթների նկատմամբ:
- Նախապատրաստվել և ներկայացվել են Լոռու մարզի հանրակրթական դպրոցների դասագրքերի 2016-2017 ուստարվա հայտերը:
- Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են տարվել ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ «Անտարես» հրատարակչության կողմից նախաձեռնած «Ընթերցանության մրցույթ 2016» միջոցառման մարզային փուլն անցկացնելու ուղղությամբ:
- Ապահովվել է «Դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկված դպրոցների հաշվետվությունների ներկայացումը:
- Ի կատարումն «Դպրոցականների՝ 2016թվականի ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի՝ 30.05.2016թ. թիվ 444-Ա որոշման 3-րդ կետի՝ 2016թ. հունիսի 20-ին կազմակերպվել է Լոռու

մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհագրայինների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 150 երեխաների ընտրությունը եւ ընդգրկումը Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբար:

- Մարզի բոլոր դպրոցներում կազմակերպվել են «Վերջին զանգ» արարողության հետ կապված միջոցառումներ, որին մասնակցել են նաև մարզպետարանի աշխատակիցները:
- Վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում իրականացվել են ուսումնասիրություններ Տաշիր քաղաքի, Կուրթանի և Լեռնահովիտի ՆՈՒՀ-երում:
- Հունվար-հունիս ամիսների ընթացքում ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցերի առնչությամբ կատարվել է քաղաքացիների ընդունելություն:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է 1,152,000.0 **հազ.դրամ**, սակայն փաստացի պլանավորվել է կատարել 3,113,600.00 հազ.դրամի ծավալով աշխատանքներ:

2016թ կրթության ոլորտում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացվել է 705,000.0 **հազ.դրամ** աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից 1,622,000.0 **հազ.դրամ** որից քաղաքաշինության նախարարություն՝ 60,000.00 **հազ.դրամ** (Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցում): Միջազգային կազմակերպությունների կողմից ներդրումը կազմել է 472,000.0 **հազ.դրամ** (Դեբեդ համայնքում «Սմարթ» կենտրոնի կառուցում) , «Տաշիր» հիմնադրամի միջոցներով 173,000.0 **հազ.դրամ** (Ալավերդի /74,000.0 հազ.դրամ/ և Սպիտակ /99,000.0 հազ.դրամ/ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքի կառուցում) և այլ ֆինանսական աղբյուրներով կատարվել է շուրջ 173,000.0 **հազ.դրամի** աշխատանքներ:

Կրթության ոլորտում 2016թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.1.1

| Հ/Հ | Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ (ճշտված) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|-----|--|---------------------|---------------------|--------------------------|--------------|
| | | | 01.07.16թ. հազ.դրամ | այդ թվում հրատապ ծրագրով | |
| | Ընդամենը մարզում՝ | 3,113,600.0 | 705,000.0 | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 1,622,000.00 | 60,000.0 | | |
| | ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 180,000.0 | 60,000.0 | | |
| 1 | Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցում | 180,000.0 | 60,000.0 | | |
| | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | 125,000.0 | 0,00 | | |
| 1. | Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ | 100,000.0 | 0,00 | | |
| 2. | Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցում | 25,000.0 | 0,00 | | |
| | ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 95,000.0 | 0,00 | | |

| | | | | | |
|-----|---|-------------------|------------------|--|--|
| 1 | Սպիտակի պետական քոլեջի հիմնանորոգում | 15,0 | 0,00 | | |
| 2 | ք.Ստեփանավանի ավագ դպրոցի վերանորոգման նախագծային և շինարարական աշխատանքներ | 80,0 | 0,00 | | |
| III | ՄԻՋ.ԿԱԶՄ. և ԴՈՆՈՐՆԵՐ | 500,000.00 | 472,000.0 | | |
| | Դեբեդ համայնքում «Սմարթ կենտրոնի» կառուցում | 500,000.00 | 472,000.0 | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | | |
| V | ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ | | | | |
| VI | ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ | 991,600.0 | 173,000.0 | | |
| | Ալավերդում մանկապարտեզի կառուցում | 495,800.0 | 74,000.0 | | |
| | Սպիտակ քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում | 495,800.0 | 99,000.0 | | |

2.2 Մշակույթ և սպորտ

Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2016թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Կազմակերպվել և անց են կացվել ամանորին եւ Սուրբ Ծննդյան, հայոց բանակի կազմավորման 24-րդ տարելիցի, հանրապետության տոնին և Ղարաքիլիսայի հերոսամարտի 98-րդ տարեդարձի, կանանց միջազգային, մայրության և գեղեցկության տոնի, երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մի շարք միջոցառում-հանդիսություններ, որոնց մասնակցել են պետական և հոգևոր այրեր, մտավորականներ, մանկավարժներ, արվեստագետներ, Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտին մասնակցած վետերաններ, զինվորներ:
- Մայիսյան հաղթանակներին նվիրված «Այսուհետև միշտ պիտի պահենք, պահպանենք մեր հաղթանակները» խորագրով միջոցառումներ:
- «Պետական աջակցություն» մշակութային միջոցառումների ծրագրի շրջանակներում Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում կազմակերպվել է կանանց միջազգային օրվան նվիրված հանդիսություն: Հրավիրվել են կրթության, մշակույթի և արվեստի բնագավառներում ակնառու ծառայություններ մատուցած մտավորական կանայք: Հանդիսության ավարտին տրվել է տոնական համերգ, իսկ վերջում կազմակերպվել հյուրասիրություն:
- Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի 101-րդ տարելիցին նվիրված կազմակերպվել է ջահերով երթ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցուց դեպի Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ Նահատակաց պուրակ: Կազմակերպվել է մոմավառություն՝ ծաղիկների և ծաղկեպսակների խոնարհում խաչքարին:

- Սանահինի միջնադարյան համալսարանի հիմնադրման 1050-ամյակին նվիրված ուխտագնացություն Սանահին վանքային համալիր:
- Թանգարանների միջազգային օրվան նվիրված «Թանգարանային գիշեր» միջոցառումներ մարզում գործող թանգարաններում:
- ԼՂՀ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի համույթի համերգները Լոռու մարզի Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի և այլ համայնքներում:
 - Եվրոպայի օրվան նվիրված միջոցառումներ մարզի քաղաքային և առավել մեծ գյուղական համայնքներում:
 - «Ֆրանկաֆոնիայի երկամսյակի» շրջանակներում բազմաթիվ միջոցառումներ՝ մշակութային օջախներում:
 - «Հայ Վերածնունդ» արվեստների հանրապետական 2-րդ փառատոնը՝ Վանաձորում:
- «Ազգային գրադարանների շաբաթ» միջոցառումներ մարզում գործող գրադարաններում:

Սպորտի և երիտասարդության ոլորտ

- Ապրիլ-մայիս ամսիններին Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «<<Կենտրոն>> համալիր մարզադպրոցում կայացավ ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված դպրոցականների մարզական խաղերի Լոռու մարզային փուլը: Հաղթողները իրավունք ստացան մասնակցելու միջփնջային մրցաշարերին:
- «Ազգային ժողովի գավաթի» մրցումների առաջին /ներդպրոցական/ և երկրորդ /տարածաշրջանային/ փուլերին հաջորդեց Լոռու մարզային փուլը, որը կայացավ 2016թ. ապրիլի 29-ին Վանաձորի թեթև աթլետիկայի մարզադպրոցում՝ տարածաշրջանային փուլի հաղթողների մասնակցությամբ: Հաղթողները իրավունք ստացան մասնակցելու հանրապետական եզրափակիչ փուլին:
 - 2016թ.-ի մայիսի 1-ից 9-ը Վանաձորում անցկացվեց «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ-2016» մրցաշարը՝ ֆուտբոլ մարզաձևից, որին մասնակցեցին տարածաշրջաններում հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 16 թիմ: Հաղթողներն ու մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվեցին մարզպետի պատվոգրով, մարզպետի գավաթով, մեդալներով, դրամական պարգևներով:
 - 2016թ հունիսին Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «<<Կենտրոն>> համալիր մարզադպրոցում կայացավ ՀՀ նախագահի մրցանակի համար «<<Լավագույն ՆՈՒՀ>> մրցաշարի Լոռու մարզային փուլը, որին մասնակցեցին տարածաշրջաններում հաղթած մանկապարտեզները: Հաղթող ճամաչվեց Վանաձորի թիվ 31 մանկապարտեզը, որն էլ իրավունք ստացավ մասնակցելու հունիսի 19-20-ը Երևանում նախատեսված եզրափակիչ հանրապետական փուլին:
 - Ընթացքի մեջ է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցաշարի Լոռու մարզային փուլը, որի արդյունքով կկազմավորվի օգոստոս ամսին Ծաղկաձորում անցկացվելիք եզրափակիչին մասնակցողների հավաքական թիմը:
 - Հունիսի 21-23 Վանաձորի թեթև աթլետիկայի մարզադպրոցում նախատեսվում է ՀՀ

նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք-2016» մրցույթի Լոռու մարզային փուլը: Չորս տարիքային խմբերում 1-3 տեղեր գրաված ընտանիքները իրավունք կստանան մասնակցելու Ծաղկածորում կայանալիք հանրապետական եզրափակիչ փուլին:

Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2016թ. առաջին կիսամյակում կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի կազմել է 330,000.0 հազ.դրամ, ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է 77,504.0 հազ.դրամ (ճշտված ՏԱՊ-ով 616,504.0 հազ.դրամ): ՀՀ Մշակույթի նախարարության կողմից, պետ. բյուջեով իրականացվել է **10,400.00 հազ.դրամ** աշխատանքներ, որից 4,000.00 հազ.դրամը Քոբայրավանքի, 4,400.00 հազ.դրամը Սանահինի վանքային և 2,000,00 հազ.դրամը Դսեղի Բարձրաքաշ եկեղեցու վերանորոգման աշխատանքներ:

Մշակույթի և սպորտի ոլորտներում 2016թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.2.1

| Հ/Հ | Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ (ճշտված) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|------------|---|---------------------|---------------------|--|--------------|
| | | | 01.07.16թ հազ.դրամ. | | |
| | Ընդամենը մարզում՝ | 616,504.0 | 10,400.0 | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 616,504.0 | 10,400.0 | | |
| | ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 62,400.00 | 10,400.0 | | |
| 1 | Քոբայրավանքի վերանորոգում | 22,000.00 | 4,000.00 | | |
| 2 | Սանահինի վանքային համալիրի վերանորոգում | 23,000.00 | 4,400.00 | | |
| 3 | Դսեղի Բարձրաքաշ եկեղեցու վերանորոգում | 17,400.00 | 2,000.0 | | |
| | ՀՏՁՀ | | | | |
| 1 | Ալավերդու մանկապատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի հիմնանորոգում | 86,000.00 | 0,00 | | |
| 2 | Նորաշենի համայնքային կենտրոնի վերանորոգում | 53,000.00 | 0,00 | | |
| 3 | Տաշիրի համայնքային կենտրոնի հիմնանորոգում | 400,000.0 | 0,00 | | |
| | ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | | | | |
| | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | |
| II | ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | |
| III | ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ., ԴՈՆՈՐՆԵՐ | | | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | | |
| V | ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ | | | | |
| VI | ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | |

2.3. Առողջապահություն

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,301,800.00 հազ.դրամ**, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **1,100.000.0 հազ.դրամ** ծավալով աշխատանքներ, ճշտված ՏԱՊ-ով այդ գումարը կազմել է՝ **2,098,000.0 հազ.դրամ** :

2016թ առաջին կիսամյակում առողջապահության ոլորտում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացվել է **410,000.0 հազ.դրամի** աշխատանքներ, որից՝ քաղաքաշինության նախարարությունը պետ. բյուջեից **350,000.0 հազ.դրամ** («Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում) աշխատանքներ : Այլ ֆինանսական աղբյուրներով իրականացվել է շուրջ **60,000.0 հազ.դրամի** աշխատանքներ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցման համար:

Առողջապահության ոլորտում 2015թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.2.1

| Հ/Հ | Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ (ճշտված) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|------------|--|---------------------|--------------------|---------------------------|--------------|
| | | | 01.07.16թ հազ.դրամ | այդ թվում՝ հրատապ ծրագրով | |
| | Ընդամենը մարզում՝ | 2,098,000.00 | 410,000.0 | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 1,100,000.0 | 350,000.00 | | |
| | ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆ.ՆԱԽ. | 1,100,000.0 | 350,000.00 | | |
| 1. | «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում | 1,100,000.0 | 350,000.00 | | |
| | ՀՀ ԱՌՈՂՋ. ՆԱԽ. | | | | |
| III | ՄԻՋ.ԿԱԶՄ. և ԴՈՆՈՐՆԵՐ | | | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | | |
| V | ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ | | | | |
| VI | ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ | 998,000.00 | 60,000.0 | | |
| | «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցում | 998,000.00 | 60,000.0 | | |

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են. համարվում բուժօժանդությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և

նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում,
- Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում,
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում,
- Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում,
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:

Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

Առողջության ամրապնդման և հիվանդությունների (ոչ վարակիչ) կանխարգելման կենտրոնի ստեղծումը չկայացավ պետական բյուջեի կողմից ֆինանսական միջոցներ չտրամադրվելու պատճառով՝ որպես հետևանք համաշխարհային ֆինանսական ճգնաժամի:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերից ընթացքի մեջ են՝

- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման շարունակական աշխատանքները: Կառուցվող բժշկական կենտրոնը հագեցած կլինի ժամանակակից սարքավորումներով և համապատասխան կադրերով:

Ավարտվել են՝

- ✓ «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները: Շենքը հանձնված է շահագործման:
- ✓ «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ պատուհանների և պատուհանագոգերի վերանորոգում 470170 դրամի չափով, կահույքի ձեռք բերում՝ 663500 դրամի չափով:
- ✓ «**Օձունի բժշկական ամբուլատորիա**» ՀՈԱԿ-ի սեփական միջոցներով կատարվել է Հազվու ԲՄԿ-ի 2 սենյակի և միջանցքի բետոնապատում ծախսվել է ընդամենը 28000 դրամի չափով:
- ✓ «Մեծ պարնիի ԱԿ» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք է բերվել «Ուլտրաձայնային սոնոգրաֆ» ապարատ 2300000 դրամ արժեքով:
- ✓ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի սեփական միջոցներով կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ ծննդատան մասնաշենքի թվով 4 սենյակ , մասնակի վերանորոգվել է «Նարեկ» մանկական մասնաշենքի տանիքը՝ 327,7 հազ դրամ արժեքով: «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համար ձեռք է բերվել Պոմպ(KALDO QB/80) 52,0 հազ. դրամ և համակարգչային տեխնիկա՝

պլանշետ Surface lenovo A7 – 30 black՝ 53,0 հազ դրամ արժեքով :

6.«Գուգարքի ԱԱՊԿ» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել միկրոլաբ 540 բիրքիմիական հատուկ ֆոտոմետր՝ 430.000 դրամ արժեքով:

Իրականացվել են մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի պահպանման և տեխնիկական հագեցվածության աշխատանքներ:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթացել են սերտ համագործակցային աշխատանքներ, մասնավորապես՝

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին կատարվել է ներդրում 7.9 միլիոն, որը տրամադրվել է հակատուբերկուլյոզային մասնաշենքի վերանորոգմանը: ՀՀ ԱՆ մարդասիրական օգնության կողմից պատվաստանյութերը պահելու համար տրամադրվել է սառնարան: Հայկական նեոնատալ բժշկական ասոցիացիայի կողմից տրամադրվել է համակարգչային տաբլո, տպիչ և հատակի կշեռք:

Դիակոնիա-Հայաստան բարեգործական հիմնադրամի կողմից կատարվել է Շենավանի բուժականակաբարձական կետի կապիտալ վերանորոգումը՝ մոտ 2 մլն.150 հազ.արժեքով, իսկ կահավորանքի և բուժսարքավորումների հագեցվածությունը իրականացվում է «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցներով մոտ 700.000 դրամի արժողությամբ, բացումը նախատեսվում է առաջիկայում:

Ավարտվել է «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մարզային ակնաբուժական կենտրոնի ստեղծումը, որի բացումը տեղի է ունեցել 2016թ. հունիսի 27-ին: «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ներդրումը կազմել է մոտ 42 մլն. դրամ, իսկ Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերանորոգման աշխատանքների, կահավորման և լիցենզիայի պահանջները բավարարելու համար ներդրվել է մոտ 4 մլն. դրամ:

«Բաց հասարակություն» ՀԿ-ի հետ համատեղ հոգեկան հիվանդների խնամք իրականացնելու նպատակով Սպիտակ քաղաքում ստեղծվել է հոգեկան առողջության կենտրոն՝ նախատեսված 16 հիվանդների համար: Կենտրոնը սկսել է իր գործունեությունը 2016թ. հունիսի 1-ից:

ՀՀ Ան տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի միջոցով թվայնացվել են «Սպիտակի բժշկական կենտրոն», «Ալավերդու բժշկական կենտրոն» և «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների ֆյուրոգրաֆիայի ապարատները՝ յուրաքանչյուրը 23 մլն 400 հազ. դրամ-ական արժեքով:

«Արևաշողի ԱԱՊԿ»ՊՈԱԿ-ը մարդասիրական օգնության ճանապարհով ստացվել է պատվաստանյութի պահպանման սառնարան VESTFROSTMK404 և պատվաստանյութի պահպանման ջերմային ռեժիմը գրանցող սարք:

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների /ԱԱՊԲ/ ծրագրերի հետ: «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությունը սերտ համագործակցում է հատկապես Ստեփանավանի և Ալավերդու տարածաշրջանների առողջապահական հաստատությունների հետ: Կազմակերպության կողմից որոշ առողջապահական ընկերությունների հատկացվել են դեղորայք և բժշկական պարագաներ, գույք:

«Արևածագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի բուժանձնակազմը մասնակցել է «Վորլդ Վիժն» և

«Մանուկների հիմնադրամ» կազմակերպությունների կողմից կազմակերպված կրթական դասընթացներին: «Վորլդ Վիժն» կազմակերպության գույք է տրամադրվել նաև նոր վերանորոգված «Կարմիր Աղեգու» ԲՄԿ-ին:

«Լե լաբողատուաղ Սերվիե», «Վիժն» դեղագործական ֆիրմաները մարզում կազմակերպել են սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի գրեթե բոլոր մասնագիտությամբ բժիշկներ:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարգահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Փամբակ, Շահումյան համայնքների ազգաբնակչության ստոմատոլոգիական սպասարկումը, ներկայումս տեղակայված է Գյուլագարակ համայնքում: Շարժական կլինիկան իր գործունեության սկզբից արդեն սպասարկել է շուրջ 1855 մարդ:

Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝ Վանաձորում «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը /սպասարկում է մանկական ազգաբնակչությանը/, տրամադրում ակնոցներ, լինզաներ, ատամի մածուկներ:

Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, /իրականացնում են մինչև 15 տարեկան երեխաների անվճար ստոմատոլոգիական օգնություն, հատկացվում է անվճար դեղորայք/:

Պարբերաբար ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Լոռու մարզի առողջապահական ընկերություններին անհրաժեշտ մասնագետների պահանջարկը: ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցության արդյունքում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ գործուղումներով Լոռու մարզ են գործուղվել բժիշկներ:

Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Մարզից Սանկտ-Պետերբուրգում վերապատրաստում է անցել 1 բժիշկ, Չինաստանի Հանրապետությունում 1 բժիշկ:

Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 2 և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի են ընդունվել 2 սիրիահայ բժիշկներ/:

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից Լոռու մարզի 5 համայնքներում միգրանտների շրջանում կազմակերպվել են լաբորատոր հետազոտություններ:

«Լոռու առողջապահություն» հիմնադրամը, որը ստեղծված է մարզի առողջապահության բնագավառին տարաբնույթ աջակցություն ցուցաբերելու նպատակով, 01.07.2016թ. մարզի երեք առողջապահական ընկերությունների տրամադրել է 3380.000 դրամ՝ փոխառության նպատակով և ընկերություններում այլ աշխատանքներ իրականացնելու համար: Լոռու մարզից զոհված զինծառայողների ութ ընտանիքների տրամադրվել է 1600.000 դրամ, 1185.000 դրամ տրամադրվել է հիվանդ կամ կարիքավոր բուժաշխատողների աջակցման և սոցիալապես անապահով քաղաքացիների, 723.000

դրամ՝ բուժաշխատողի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման նպատակով:

Առողջապահական ընկերություններում բացառված են աշխատավարձերի և սոց. վճարների գծով պարտքերը:

Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 5 տարածաշրջանային և 1 ստացիոնար /վիրաբուժական և թերապևտիկ պրոֆիլ/ բժշկական հանձնաժողովները:

Համաձայն ՀՀ ԱՆ 28.03.2014թ. թիվ 617-Ա և ՀՀ ՊՆ 01.04.2014թ.թիվ 5-Ա համատեղ հրամանի և ՀՀ ԱՆ 13.05.2014թ. թիվ 1014-Ա հրամանի Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացը իրականացվել է ըստ կցագրված բուժհաստատությունների ցանկի՝ Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի համար՝ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում, տարածաշրջանների համար՝ համապատասխան տարածաշրջանային բժշկական կենտրոններում: Մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման նպատակով մարզպետի որոշմանը ստեղծվել են կանխարգելիչ պատվաստումների միջոցառումները համակարգող մարզային և տարածաշրջանային հանձնաժողովներ և նշանակվել տարածաշրջանային պատասխանատու համակարգողներ: Աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով Վանաձոր քաղաքում և տարածաշրջանային պոլիկլինիկաներում ձևավորվել են աշխատանքային խմբեր:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ 2013 թվականի հունվարի 13-ից «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում երեք անձինք իրականացնում են այլընտրանքային ծառայություն:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության 27.06.2008թ. «Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման գործընթացի մոնիթորինգի մասին» թիվ 927-Ա հրամանի ըստ պահանջվող ձևի յուրաքանչյուր ամիս ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Լոռու մարզի բուժհաստատություններից հավաքագրվող տվյալներ ծնունդների վերաբերյալ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2009թ. թիվ 2001-Ա հրամանի հավելվածների «Արգանդի վզիկի քաղցկեղի վաղ ախտորոշման, բուժման և կանխարգելման» ազգային ծրագրի շրջանակներում և 15 տարեկան հետազոտված աղջիկների թվի, հայտնաբերված ախտաբանությունների և իրականացված միջոցառումների մասին, հավաքագրվել և ՀՀ առողջապահության նախարարություն են ներկայացվել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2016թ ապահովվել է մարզի ՔՊ բժշկական ծառայության մասնակցությունը մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպված շտաբային ուսումնավարժություններին՝ տարածաշրջանների բժշկական ծառայության պետերի, մարզի բժշկական ծառայության ղեկավար կազմի պատրաստականությունը ստուգելու և կատարելագործելու նպատակով:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործող /0322/ 2-33-99 հեռախոսահամարով թեժ գծի մասին իրազեկում բնակչությանը և համայնքների ղեկավարներին /համապատասխան հայտարարություն տպագրվել է մարզային լրագրում, հայտարարվել մարզխորհրդի ժամանակ/, տեքստը տեղադրվել է մարզպետարանի կայք-էջում, մարզի առողջապահական ընկերություններում տեսանելի վայրում փակցված են թեժ գծի հեռախոսահամարը՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով:

Մի շարք առողջապահական ընկերություններ բացել են ինտերնետային կայք-էջեր, որտեղ արտացոլված են ընկերությունների ողջ գործունեությունն ու աշխատանքի ծավալը:

2016թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բուժաշխատող» անվանակարգով: Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ և մեկ բարեգործական կազմակերպություն՝ «Դիակոնիա», բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:

Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից Երևան քաղաքում և Լոռու մարզում կազմակերպվել է «տեղամասային մանկաբույժի դպրոց»՝ տարբեր թեմաներով, որոնց մասնակցել են մոտ 40 մանկաբույժներ և ընտանեկան բժիշկներ:

Հայ-Ամերիկյան համալսարանում ՀՕՖ-ի կողմից կազմակերպվել է «Այսօրվա սնուցումը կարևոր է վաղը» թեմայով միջազգային համաժողով, որին Լոռու մարզից մասնակցել են 26 բժիշկներ:

ԱՀԿ-ն Իմունոկանխարգելման ազգային ծրագրով կազմակերպել է պոլիոմիելիտի եռավալենտ պատվաստանյութը երկվալենտով փոխարինելու վերաբերյալ դասընթացներ:

«Էրեբունի» բժշկական կենտրոնի առաջատար մասնագետների կողմից Լոռու մարզի բժիշկների համար կազմակերպվել է գիտաբժշկական կոնֆերանս, որին մասնակցել են թվով 62 բժիշկներ՝ նյարդաբաններ, սրտաբաններ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ:

«Հ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվում մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված դեղորայքը:

Կազմակերպվել և կանոնակարգվել են նաև մի շարք հանրապետական սեմինար-խորհրդակցություններին Լոռու մարզից համապատասխան մասնագետների մասնակցության գործընթացը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 881-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի Լոռու մարզի 13 առողջապահական ընկերություններում գործում է կորպորատիվ կառավարման համակարգը:

| 2016թ.բազային ծավալ | | | |
|----------------------------|---------------|---------------------------|-----------------------------|
| | բազային ծավալ | Կատարողական Առ 01.06.2016 | Ֆինանսավորում Առ 01.07.2016 |
| հիվանդանոցային | 1564489,2 | 689860,3 | 665892,9 |
| արտահիվանդանոցային | 2252972,3 | 931920,4 | 943503,4 |
| Ընդամենը | 3817461,5 | 1621780,7 | 1609396,3 |

Առ 01.07.2016թ. առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շինարարական այլ աշխատանքներ դեռևս չեն կատարվել:

Առ 01.07.2016թ. մարզի առողջապահական ընկերություններում սահմանված կարգով ապահովվել է բնակչության անվճար բուժօգնությունը, իրագործվել են պետական առողջապահական ծրագրեր: Մարզպետի կողմից տրամադրվել է շուրջ 59 միջնորդագրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Մարզից Երևան քաղաքի

առողջապահական ընկերություններ են ուղեգրվել 25 հիվանդներ, որոնք հիմնականում այն հիվանդներն են, որոնց բուժօգնությունը մարզում կազմակերպել հնարավոր չէր /տվյալ ծառայության բացակայություն կամ մասնագիտացված բուժօգնության կազմակերպում/:

Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները: Վերջին տարիներին տարբեր հիվանդություններով հիվանդացությունը ենթարկվել է էական ներկառուցվածքային և քանակական փոփոխությունների:

2011-2016թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մեր մարզում առկա է շաքարային դիաբետով, հոգեկան հիվանդություններով, նորագոյացություններով, պարբերական հիվանդություններով հիվանդացության աճ:

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 Առ 01.07 |
|-----------------------------|------|---|---|--|--|--|
| Շաքարային դիաբետ | 3581 | 3902 | 4013 | 4312 | 4748 | 4824 |
| Նորագոյացություններ | 2814 | 3004 | 3136 | 3289 | 3497 | 3507 |
| Հոգեկան հիվանդություններ | 4126 | 4792 /այդ թվում 592-ը նարկոլոգ. կար./ | 4500, այդ թվում 596 -ը նարկոլոգ. կար./ | 5000, այդ թվում 655-ը նարկոլոգ. կար./ | 5062, այդ թվում 588-ը նարկոլոգ. կար./ | 5130, այդ թվում 590-ը նարկոլոգ. կար./ |
| Սեռավարակներ | 978 | 1312 | 1278 | 1197 | 1312 | 1263 |
| Պարբերական հիվանդություններ | 394 | 420 | 442 | 491 | 502 | 510 |
| Տուբերկուլոզ | 553 | 615 | 402 | 380 | 368 | 377 |

2016թ. առաջին կիսամյակում մարզում արձանագրվել է երեխայի 8 մեռելածին դեպք, 0-7 օրեկան երեխայի 5 մահ, 0-1 տարեկան երեխայի 4 ստացիոնար և 0 տնային մահ, 1-5 տարեկան երեխայի 0 ստացիոնար և 1 տնային մահ/ :

| | 2014թ.1-ին կիսամյակ | 2015թ.1-ին կիսամյակ | 2016թ.1-ին կիսամյակ |
|-----------|------------------------|------------------------|------------------------|
| Ծնունդներ | 1428 | 1253 | 1227 |
| Մահեր | 1545 | 1474 | 1484 |

Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն /ՀՀ կառավարության 7 հուլիսի 2011թ. թիվ 992-Ն որոշում/:

Ի կատարումն ՀՀ Կառավարության 2008թ. հունիսի 19-ի թիվ 24 արձանագրային որոշման և համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. նոյեմբերի 18-ի թիվ 1661-Ա հրամանի, Լոռու մարզում շարունակվել են ԱԱՊ որակի բարելավմանն ուղղված աշխատանքները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 285-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի վերակազմակերպել են «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական

ընկերությունները՝ «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը միացնելով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությանը: Նույն որոշմամբ լուծարման գործընթաց է սկսվել «Կուրթանի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծելով Կուրթանի, Ագարակի, Գյուլագարակի, Գարգառի բուժակ-մանկաբարձական կետեր:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 01.07.2016թ. «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր», «ԱՍԱՐ» առողջարաններ են ուղեգրվել 22, 0, և 53, 14 թվով քաղաքացիներ, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 8 երեխա:

Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 60 հիվանդներ:

Վերահսկվել է մարզի առողջապահական ընկերություններում սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտին առնչվող հարցերի լուծումը:

Մարզում ծագած հակահամաճարակային լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ օպերատիվ կարգով հրավիրվում են խորհրդակցություններ՝ շահագրգիռ կողմերի, ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ: Ցուցաբերվել է աջակցություն մարզում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը՝ վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով:

Մարզպետի ուշադրության կենտրոնում է նաև դպրոցական և նախադպրոցական հաստատություններում ջերմային ռեժիմի և կանխարգելիչ միջոցառումների պահպանման գործընթացը:

Ուսումնասիրվել են Լոռու մարզի բուժկանխարգելիչ հաստատությունների հաստիքացուցակների և մատուցվող վճարովի ծառայությունների գները, կատարվել են համապատասխան փոփոխություններ և հաստատվել:

2.4. Սոցիալական պաշտպանություն

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. սոցիալական ապահովության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **401,900.0 հազ.դրամ**: Այս բնագավառում 2016թ. ռազմավարական ուղղություն է սահմանվել բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Նպատակի կենսագործմանը կուղղորդվեն ՀՀ Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավման /առաջարկվել է՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագիրը/, մատչելի միջավայրի ապահովման /առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը/, Տարածքային սոցիալական պլանների կազմման և

իրականացման /առաջարկվել է՝ «Աջակցություն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» համագործակցային թիվ 3 ծրագիրը/, բնակարանային ապահովման աջակցության /առաջարկվել են «Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 4 և «Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 5 ծրագրերը/ ծրագրային աշխատանքները, որոնց իրականացման համար բացի պետական բյուջեի միջոցներից, ակնկալվում են նաև որոշակի ներդրումներ միջազգային, դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համագործակցային կողմերն են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, պաշտպանության, նախարարությունները, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և համայնքները:

2016թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար կընդլայնվեն սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես՝ բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական, ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը: Ներկայումս համակարգչային կապով մարզպետարանի հետ կապված են մարզի 56 համայնքները, իսկ էլեկտրոնային կայք-էջ ունեն 47 համայնքներ /հիմնականում տարածաշրջանային կենտրոնները/, շուրջ 41 տոկոսը:

2016թ.-ի 1-ին կիսամյակում զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը: Մարզի Վանաձոր, Սպիտակ և Ալավերդի քաղաքներում ընթացքի մեջ են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրի թվով երեք ենթածրագրերը. ա/ Վանաձորում՝ «Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի կարողությունների զարգացում, հոգեբանական և իրավաբանական ծառայությունների մատուցում»՝ հոգեբանական՝ 120, իրավաբանական՝ 45, բ/ Սպիտակում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսապայմանների բարելավում՝ ջերմոցային բանջարաբուծության մեջ զբաղվածություն ապահովելու միջոցով»՝ աշխատակիցների թիվը՝ 20, որից՝ 10 հաշմանդամություն ունեցող, գ/ Ալավերդիում՝ «Տնային պայմաններում սոցիալական ծառայությունների տրամադրում Ալավերդի քաղաքում»՝ շահառուների թիվը՝ 40-50 տարեցներ և 50-60 երեխա: Ծրագրերին մասնակից ընտանիքների թիվը՝ 275-295:

Կարևորվում են նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Կենսական նշանակություն ունեն զոհված

կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև անօթևան փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերը:

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2016թ. 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում ծրագրի շրջանակներում մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ ինտեգրված սոցժառայությունների մատուցման փորձնական ծրագրի շրջանակում UNICEF-ի և Համայնքների ֆինանսիստների միության կողմից «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների» և «Վաղ հայտնաբերում և վաղ միջամտություն» ծրագրերի 2015թ. կազմակերպված 2 դասընթացների սեմինար քննարկումներ /շարունակական/:

- **Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում** (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ ուժերով իրականացվել են սոցիալական ծրագրեր:

- Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, Լոռու մարզի երկրապահ կամավորականների միություն, Խուլերի մարզային կազմակերպություն, «Հայկական Կարիտաս» ՄՀԿ, Վանաձորի նախկին տնակային ավանների բնակիչներին՝ բնակարանային վարձավճար, ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքներին և այլն):

- ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել առանձին քաղաքացիների կամ կազմակերպությունների /թվով 39 համայնքների 426 ընտանիքների տրամադրվել է 11,585 մլն դրամ/: Անհայտ կորած զինծառայողների 15 ընտանիքների տրամադրվել 300 հազար դրամ աջակցություն, վիրավոր զինծառայողների թվով 3 ընտանիքների՝ 190 հազար դրամ, ընտանիքի օրվա կապակցությամբ թվով 7 ընտանիքների՝ 210 հազար դրամ, վետերանների խորհրդին՝ 70 հազար դրամ, հատուկ գնդի վետերաններին՝ 40 հազար դրամ:

- «Առավոտ» ՀԿ-ի հետ իրականացվում է հատուկ հաստատությունների բեռնաթափման /20 երեխա/ և կանխարգելման /30 երեխա/ ծրագիր:

- Խոցելի խմբերի վերաբերյալ համայնքներում ստեղծվել են տեղեկատվական շտեմարաններ, որոնց հիման վրա էլ ընթանում են օգնության ծրագրերը համայնքներում:

- Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում. ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը՝ 89 («Առավոտ» ՀԿ՝ 16, «Հայկական Կարիտաս»՝ 9 (Վանաձոր՝ 5, Տաշիր՝ 4), «Լիարժեք կյանք»՝ 44), «Խաչվող ուղիներ»՝ 3, «Օրրան»՝ 15, «Շող»՝ 2:

- «Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում»՝ Սոցիալական համալիրների (սոցիալական աջակցության, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՍՓՀ) կառուցում» ծրագրի իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ: Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14

հասցեում 2005թ. մեկտեղվել են վերոնշյալ սոցիալական կազմակերպությունները (որպես հանրապետությունում փորձական առաջին ծրագրի արդյունք): Նոր տարածքներ են հատկացվել Ստեփանավան, Սպիտակ և Ալավերդի քաղաքներում, իսկ Տաշիրում Սոցիալական համալիր կենտրոնի համար տրամադրվել է համայնքային սեփականություն հանդիսացող եռահարկ շենքը:

- Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում. Մարզպետարանի աշխատակազմի թվով 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները (Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) աշխատում են կայուն համացանցային կապով ինչպես մարզպետարանի, այնպես էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:

ՀՀ Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում.

- ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը 33 որից՝ «Լիարժեք կյանք» ԲՀԿ՝ 20 «Հայկական Կարիտաս»՝ 8 (սոցաշխատող՝ խնամող և բուժքույրեր):

- Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 427 («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի միջոցներով՝ Վանաձոր՝ 142 Ալավերդի՝ 127, Սպիտակ՝ 107, Տաշիր՝ 51, իսկ մարզկենտրոնում և Ալավերդում ևս 102 անձ /Վանաձորում՝ 90 Ալավերդի՝ 12/ սպասարկվում է տնային պայմաններում:

- Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 148 («Հայկական Կարիտասը» Վանաձորում և Տաշիրում սպասարկվում են համապատասխանաբար 88 և 60) տարեցներ:

- Հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով:

- 2016թ. 1 եռամսյակում հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել 41 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից 4 սայլակ, 11 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա/, 7 հենակ, 3 քայլակ, 4 լսողական սարք, պրոթեզավորում 12 անձ (որից՝ 6 կրծքի):

- Համագործակցային ծրագիր է իրականացվել երևանյան «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն, որը մարզում ավելի քան 250 հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում կատարել է կարիքների գնահատում, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է պարագաներ և գույք՝ «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի, «Լիարժեք կյանք» և «Սպիտակ բազե» ՀԿ-ների աջակցությամբ:

Աջակցություն զբաղվածության քաղաքականությանը.

- Զբաղվածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:
- Գործազուրկների թիվը՝ 10885 մարդ /որից՝ 7665 կին/. (Վանաձոր՝ 5314 /որից՝ 3708 կին/, Ալավերդի՝ 1446 /, որից՝ 1012 կին/, Ստեփանավան՝ 2121 /որից՝ 1603 կին/, Սպիտակ՝ 1594 /որից՝ 1011 կին/, Տաշիր՝ 410 /որից՝ 331 կին):
- Նրանցից աշխատանքի է տեղավորվել 364 մարդ, որից՝ 236-ը կին (Վանաձոր՝ 205 /որից՝ 135՝ կին/, Ալավերդի՝ 42 /որից՝ 26 կին/, Ստեփանավան՝ 76 /որից՝ 42 կին/, Սպիտակ 26 /որից՝ 23 կին/, Տաշիր՝ 15 /որից՝ 10 կին):
- Իսկ զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 69 մարդ /Վանաձոր՝ 40, Ալավերդի՝ 3, Սպիտակ՝ 10, Ստեփանավան՝ 11, Տաշիր՝ 5/:

Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.

Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր(Ֆինանսական նպատակային հատկացումներ չեն եղել)Չոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր (Ֆինանսական նպատակային հատկացումներ չեն եղել):

ՄԶԾ առաջարկված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: Առաջարկված ծրագրով պետական ֆինանսավորում չի կատարվել: Այսօր առկա է հետևյալ պատկերը՝ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 72 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 19 և մշակութային՝ 53): 2016թ. 1-ին կիսամյակում սկսվել է Ճոճկան համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքները /կկառուցվի նաև թեքահարթակ/:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ գյուղատնտեսության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **3,226,000.00 հազ.դրամ** սակայն 2016թ. 1-ին կիսամյակում գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական ներդրումներ չեն արվել:

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում

✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ մշտական ուշադրության և հսկողության տակ է պահվել թունաքիմիկատների, կենսապատրաստուկների վաճառքի և պահպանման պայմանների, բույսերի մշակության ագրոտեխնիկական կանոնների պահպանման ու կիրառման, սերմերի և տնկանյութերի ցանքային պիտանելիության և որակի պահպանման աշխատանքների կազմակերպումը:

«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ կատարվել են բույսերի կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման համար ուսումնասիրություններ:

Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է 192 կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի մկնասպան միջոց, որը բաշխվել է գյուղնախարարության կողմից անցկացված մոնիտորինգի հիման վրա հաստատված մարզի 11 համայնքների: Պայքարի միջոցառումները իրականացվել է 2400 հա-ի վրա:

2015թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է

- 2300.0 տ ազոտական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 69 համայնքների կողմից: Ստացվել է 2150,55 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 66 համայնքների,

- 100 տ ֆոսֆորական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 26 համայնքների կողմից: Ստացվել է 70,25 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 10 համայնքների,

- 100 տ կալիումական պարարտանյութ որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 25 համայնքների կողմից: Ստացվել է 53,0 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 11 համայնքների,

- 1.300.000 լիտր դիզելային վառելանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 82 համայնքների կողմից: Բաշխվել է 604.902 լիտր մարզի 61 համայնքների:

2015 թվականի գարնանացանի համար մարզին հատկացվել է.

- 80 տոննա գարու սերմացու, որը ամբողջությամբ իրացվել է մարզի 34 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 400 հա ցանք:

- 4,05 տոննա եգիպտացորենի սերմացու, որից իրացվել է 1,900 տ մարզի 20 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է շուրջ 77 հա ցանք:

- 5,7 տոննա առվույտի սերմացու որը ամբողջությամբ իրացվել է մարզի 35 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 228 հա ցանք:

- 17,1 տոննա կորնզանի սերմացու, որը ամբողջությամբ իրացվել է մարզի 19 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 114 հա ցանք:

2015 թվականի աշնանացանի համար մարզին հատկացվել է 403,4 տոննա

աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը բաշխվել է մարզի 33 համայնքների: Բաշխված սերմացուով կատարվել է շուրջ 1345 հա աշնանացան, իսկ 2015թ. կատարված աշնանացանը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում կազմում է 11194 հա:

Ոռոգում

Պարբերաբար կատարվել է ուսումնասիրություններ «Գետիկ» և «Լոռու ջրանցք» ԶՕԸ-ների գործունեությունների վերաբերյալ հետևելով ոռոգման համակարգերի նպատակային շահագործման և տրված ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման գործընթացին:

Ոռոգման, ջրարբիացման և համակարգերի շահագործման նպատակներով ԶՕԸ-ների գործունեությունների ցուցանիշները 01.01.2016թ. դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| h/h | ԶՕԸ-ի անվանումը | Ոռոգված տարածքը (հա) | | | Զրտուրը հազ. խմ | Հասույթը հազ. դրամ | Գանձումը հազ. դրամ | Գանձման մակարդակը % |
|-----------------|-----------------|----------------------|--------------|---------------|-----------------|--------------------|--------------------|---------------------|
| | | Ընդամենը | որից | | | | | |
| | | | մեխանիկական | ինքնահոս | | | | |
| 1 | Գետիկ | 804,7 | 349,8 | 454,9 | 1490,1 | 16391,0 | 16391,0 | 100,0 |
| 2 | Լոռու ջրանցք | 1363,5 | 639,0 | 724,5 | 1131,0 | 12441,5 | 13391,7 | 107,6 |
| | ջրարբիացում | | | | 25,5 | 1529,8 | 1617,0 | 105,7 |
| | շահագործում | | | | 78856,8 | 11180,0 | 11613,8 | 103,9 |
| Ընդամենը | | 2168,2 | 988,8 | 1179,4 | 81503,4 | 41542,3 | 43013,5 | 103.5 |

Պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպային կայանները: Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 7,9 մլն դրամ ներդրում:

«Գետիկ» ԶՕԸ-ի սպասարկման տարածքում պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է Կաթնաջուրի դյուկեռը: Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 2.1 մլն դրամ ներդրում:

ԱՄՆ-ի ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում վերանորոգվել են.

- Շնող համայնքում կատարվել է «Շնող-1» պոմպային կայանի հեռացնող ջրանցքի 4800 մ երկարությամբ տեղամասի ՊՐ-9 ե/բ կիսխողովակների վերանորոգում, տեղադրվել են հիդրանտներ և ջրթողներ: Կատարված աշխատանքների շնորհիվ լիարժեք կոռոզվի 230 հա վարելահողեր և այգիներ: Շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվել է շուրջ 12,6 մլն. դրամ ներդրում,
- Ճոճկան համայնքում կատարվել է ներտնտեսային ջրանցքի 1220մ երկարությամբ տեղամասի նորոգում, որի շնորհիվ լիարժեք կոռոզվի 34 հա վարելահողեր:

3.2. Բնապահպանություն

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. բնապահպանության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է 300,000.00 հազ.դրամ: 2016թ. ՏԱՊ-ով նախատեսվել է 52,506.40 հազ. դրամ փաստացի աշխատանքներ չեն

իրականացվել:

Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101205 հա, որից անտառածածկ է 85799 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Մարզի անտառների կառավարումն իրականացնում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմում գործող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 անտառտնտեսություններ՝ Գուգարքի, Եղեգնուտի, Լավվարի, Զիլիզայի, Դսեղի, Ստեփանավանի և Տաշիրի:

- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, մարզում գործող անտառտնտեսությունների հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում փայտանյութի մթերման պետական առաջադրանքի և անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ տվյալները.
 - 2016թ. 5 ամիսների ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 2077մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրի շահագործման նպատակով իրականացված հատումները՝ 209մ³:
 - 2016թ. 5 ամիսների ընթացքում մթերվել է 651 մ³ թափուկ վառելիքայտ:
- 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.
 - Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում Արևաշող, Լուսաղբյուր, Փամբակ, Ալավերդի, Վանաձոր և Տաշիր համայնքներում շուրջ 1400 ծառերի տնկում;
 - Անտառային ծրագրի շրջանակներում.
 - ✓ Կողես համայնքում նախորդ տարիներին հիմնադրված 50 հա-ի վրա ցանքսի միջոցով լրացման աշխատանքներ (տնկվել է շուրջ 37800 սոճի): Նույն համայնքում կատարվել է ցանկապատի վերանորոգման աշխատանքներ;
 - ✓ Ձմռան ընթացքում ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ;
 - ✓ Տաշիր համայնքում 38 հա տարածքի ցնկապատում: 38 հա անտառտնկման և ևս 25 հա ցանկապատման աշխատանքները կիրականացվեն 2016թ. աշնանը:
 - ✓ Մինչև տարվա վերջ Սպիտակ, Ստեփանավան, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիոլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Ղուսալի, Սվերդլով, Սարատովկա և Կողես համայնքներում շուրջ 590 հա տարածքի վրա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Ներկայումս բույսերի խնամքի աշխատանքներ են իրականացվում Ծաղկաբեր համայնքում:

Անտառտնկարկների խնամքի և լրացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

- Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն 2009-15թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով կատարել է 220 հա համայնքային (73 հա՝ Լեռնահովիտ, 50 հա՝ Թեղուտ, 50 հա՝ Արջուտ, 30 հա՝ Օձուն, 17 հա՝ Շնող) և 219.7 հա պետական անտառային ֆոնդի տարածքների վրա ցանկապատման, լրացման և խնամքի աշխատանքներ: 2016թ. աշնանը նույն ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում կիրականացվի 2.3 հա անտառտնկում: Թեղուտի ծրագրի շրջանակներում 2016թ. գարնանը իրականացվել է 2015թ. աշնանը Շնող համայնքում 10 հա տարածքի վրա հիմնված պտղատու այգիների խնամքի և լրացման աշխատանքներ (արքայանարինջ 6.2 հա, կեռաս 1.9 հա, խնձոր 1.4 հա, դեղձ 0.5 հա): Աշնանը նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:

«Հայաստան» ՊՈԱԿ-ի, ՀՀ Ոստիկանության մարզային վարչության, բնապահպանության նախարարության ԲՊՏ Լոռու տարածքային բաժնի հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները:

✓ 2016թ. 5 ամիսների ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից կատարվել է 350 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառահատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 29 դեպք, պետությանը հասցված վնասի չափը կազմել է 3 մլն. 567 հազ. դրամ, որից վերականգնվել է 537 հազ. դրամը: Հարուցվել է 6 քրեական գործ, վարչական պատասխանատվության են ենթարկվել 14-ը:

✓ Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2016թ. 5 ամիսների ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 216 ծառ – 159.92 խտացված խոր.մ ընդհանուր ծավալով:

2016թ. գարնանը շաբաթօրյակների միջոցով կանաչապատման աշխատանքներ իրականացնելու համար մարզի 9 համայնքների, 27 դպրոցների և տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների մարզպետարանի կողմից տրամադրվել է «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնկարաններից օգնության կարգով ստացված վայրի տանձի, խնձորի, ընկույզի և կաղնու շուրջ 4000 տնկիներ:

2014-16թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարի համաձայնությամբ մարզի համայնքներին Թեղուտի հանքավայրի անտառածածկի հատումից առաջացած փայտանյութից 50% զեղչ գնով հատկացվել է վառելափայտ՝ 1 մ³ - 6000 դրամով:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարություններ:

2016թ. հունիսից ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ մեկնարկել է Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է ապահովել հյուսիս-արևելյան Հայաստանում հողերի և անտառների կայուն կառավարումը՝ երաշխավորելով բազմապիսի էկոհամակարգային ծառայությունների մատակարարման շարունակական ընթացքը և նպաստելով կարևոր նշանակություն ունեցող կենսաբազմազանության պահպանությանը:

Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս (2016-2019թթ):

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 5-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (Ալավերդու, Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների վերամշակման արդյունավետության բարձրացման համար կազմակերպություններին տրվել է մասնագիտական և խորհրդատվական օգնություն:

Ուսումնասիրվել և համապատասխան առաջարկություններ են արվել ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մի շարք նախագծերի վերաբերյալ:

Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ԶԼՄ-ների, պետական կառույցների, ինպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

Մարզի ընդերքի օգտագործման և օրինականության վերաբերյալ պահանջվող ձևաչափով համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2011-2015թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

| Համայնքներ | Տարիները | | | | |
|------------|-----------|-----------|-----------|-----------|-------------------|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 – նախատեսված |
| Ալավերդի | 94 411.5 | 110 000.0 | 120 000.0 | 94 097.0 | -- |
| Հաղպատ | 23 602.8 | 25 000.0 | 27 000.0 | 27 081.1 | -- |
| Օձուն | 23 602.9 | 58 664.8 | 12 498.4 | 7 403.5 | 47 918.2 |
| Աքորի | 23 602.8 | 28 000.0 | 30 000.0 | 20 173.5 | -- |
| Հազվի | 8 000.0 | 50 000.0 | 30 000.0 | - | -- |
| Ախթալա | 1 500.0 | 3 500.0 | 4 500.0 | - | 4 588.2 |
| Ընդամենը | 174 720.0 | 275 164.8 | 223 998.4 | 148 755.1 | 52 06.4 |

- Պարբերաբար իրականացվում են Ախթալայի ԼՀԿ-ի «Նազիկ» պոչամբարի 1 հա-ի վրա կատարված ռեկուլտիվացիայի և ծառատունկի աշխատանքների մոնիտորինգ: Արդյունքները փաստում են կատարված աշխատանքի բարձր արդյունավետության մասին:
- Ընթացքի մեջ է Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագիրը ենթադրում է Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան 3 աղբավայրեր, որոնք կսպասարկեն Լոռու մարզն ամբողջությամբ: Նոր աղբավայրերի շահագործմանը զուգընթաց կլուծվի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:
- Մարզպետարանի կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ, մարզի մի քանի գյուղական համայնքներ ևս ձեռք են բերել աղբարկղներ և սկսել են կատարել կանոնակարգված աղբահանության աշխատանքներ:
- Բնապահպանության բաժինը կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող մի շարք սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին: Մասնավորապես.
 - Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման (Մ6) ճանապարհի վերակառուցման բնապահպանական մասի քննարկմանը;
 - Վանաձորի քիմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակության, պահպանության և հնարավոր օգտագործման հեռանկարին նվիրված հանդիպում-քննարկում:
 - Վանաձոր քաղաքում սանէպիդկայանի նոր մարզային լաբորատորիայի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկմանը;

- «Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանի» մշակում ծրագրի կյոք սեղան-քննարմանը:
- «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» ծրագրի շրջանակներում պատրաստված «Բնապահպանական, սոցիալական և մշակույթային ժառանգության ռազմավարական գնահատում» փաստաթղթի վերաբերյալ հանրային քննարկմանը:
- Լոռու մարզում վտանգավոր թափոնները հիմնականում հանդես են գալիս ժամկետանց դեղորայքի տեսքով: Բժշկական թափոնների վնասազերծումը ոչ միայն առողջապահական, այլ նաև կարևոր բնապահպանական հիմնախնդրի լուծում է: Մարզպետարանի աջակցությամբ վտանգավոր թափոնների վնասազերծմամբ զբաղվող մասնագիտացված ընկերությունները պայմանագրեր են կնքել մարզի բուժ. հիմնարկների հետ և ըստ համատեղ մշակված ժամանակացույցի իրականացնում են ժամկետանց դեղորայքի և բուժ. պարագաների տեղափոխում և վնասազերծում:
- Ընթացքի մեջ է Ալավերդու մկնդեղի թափոնակուտակիչի ռիսկերի մեղմանն ուղղված և այն հետագայում անվտանգ վիճակի բերելու միջոցառումների նախագծա-նախահաշվային աշխատանքները: Արդյունքների հիման վրա կկազմվի գործողությունների ծրագիր, որը ոչ միայն կներակայացվի համապատասխան գերատեսչություններին և կառույցներին, այլ նաև միջազգային դոնոր կազմակերպություններին՝ տվյալ հիմնախնդրի լուծման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:
- Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը, բնության և շրջակա միջավայրի պահպանության ու ընդերքօգտագործման բնագավառներում համաձայն տրված հարցաշարերի 2016թ. I կիսամյակում Լոռու մարզի 7 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն և արդյունքները ներկայացվել են տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
- Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լուծումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուծումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, քաղաքաշինության ոլորտում (բնակարանաշինություն և բնակարանային տնտեսություն ու բարեկարգում) 2016թ. մարզում պահանջվում էր իրականացնել **3,249,641.00** հազ.դրամ ծավալով աշխատանքներ, սակայն 2016թ. պլանավորվել 60,000.00 հազ.դրամ: 2016թ. Առաջին կիսամյակում իրականացվել է **172,998.00** հազ.դրամի աշխատանքներ, Լոռու մարզի բնակավայրերում Երկրաշարժից տուժած եւ աղետի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային շինարարություն համար կատարվել է **83,300.00** հազ.դրամի ներդրում որից՝ **63,300.00** հազ.դրամը միջազգային կառույցների կողմից իսկ համայնքային բյուջեներից ներ է դրվել **20,000.0** հազ.դրամ: Լոռու մարզի բնակավայրերում Երկրաշարժից տուժած եւ աղետի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային շինարարության համար պետական բյուջեից հատկացվել է **89,698.00** հազ.դրամ:

2016թ. 1-ին կիսամյակում իրականացվել են ՀՀ պետական բյուջեով հատկացված և մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվելիք օբեկտների շինարարական աշխատանքների գնման գործընթացի նախապատրաստական աշխատանքներ, իսկ ճոճկան համայնքի մշակույթի տան շինարարական աշխատանքները սկսված են:

Կատարվել է 2016թ. և հետագա տարիների համար մարզի համայնքների քաղաքաշինական ոլորտի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ուսումնասիրություն:

2016թ. ժամանակացույցով նախատեսված է իրականացնել 37 համայնքների ղեկավարների քաղաքաշինության բնագավառի գործունեության վարչական հսկողություն: 1-ին կիսամյակում իրականացվել են 16 համայնքներում և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ընթացքում են մարզի տարածքում ֆինանսավորման բոլոր միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքների որակի հսկողությունը

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից քաղաքաշինության գծով 2016թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

Աղյուսակ 4.1
հազ.դրամ

| Հ/Հ | Օբեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ (ճշտված) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|------------|---|---------------------|--------------------|---------------------------|--------------|
| | | | 01.07.16թ հազ.դրամ | այդ թվում՝ հրատապ ծրագրով | |
| | Ընդամենը մարզում՝ | 60,000.00 | 172,998.0 | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 60,000.0 | 89,698.0 | | |
| | ՀՀ ՊԱՇՏՊ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | | | | |
| | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | |
| II | ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | |
| III | ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ. ԴՈՆՈՐՆԵՐ | | 63,300.00 | | |
| | Լոռու մարզի բնակավայրերում Երկրաշարժից տուժած եւ ոչ աղետի հետեւանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային շինարարություն | | 63,300.00 | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | 20,000.00 | | |
| | Լոռու մարզի բնակավայրերում Երկրաշարժից տուժած եւ ոչ աղետի հետեւանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային շինարարություն | | 20,000.00 | | |
| V | ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ | | | | |

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1. Ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

Լոռու մարզի 2016-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **5810.0** մլն. դրամ, սակայն բոլոր աղբյուրներով պլանավորվել է կատարել **696.5** մլն. դրամ ծավալով աշխատանքներ, որից ֆինանսավորվել է **114.063** մլն. դրամը: Մնացած աշխատանքների ֆինանսավորումը նախատեսված է կատարել երկրորդ կիսամյակում:

2016թ. պետբյուջեի **416.4** մլն միջոցներով (պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն) պլանավորվել է իրականացնել.

| | | մլն. դրամ |
|----|---|--------------|
| 1. | Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում՝ | 119.4 |
| | Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր Վրաստանի սահման, կմ 137+200- կմ141+000 հատվածի հիմնանորոգում | 82.4 |
| | ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատում | 37.0 |
| 2. | Արհեստական կառույցների պահպանում և շահագործում, այդ թվում՝ | 222.0 |
| | Պուշկինոյի թունելի հիմնանորոգում | 200.0 |
| | Տաշիր քաղաքի Կրուպսկայա փողոցի կամուրջի վերակառուցում | 22.0 |
| 3. | Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում | 75.0 |

- 2016 թվականին 32 համայնքներ իրենց բյուջեներից համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար պլանավորել են **280.1** մլն. դրամի ներդրում, որից ֆինանսավորվել է **81.38** մլն. դրամ:
- 2016-2017 թթ. նախատեսվում է Մ6-Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի վերականգնման և բարելավման աշխատանքների իրականացում՝ **100 մլն** դոլլար ընդհանուր արժողությամբ: Մրցույթը հայտարարվել է, արդյունքները պարզ կլինեն գնահատման փուլում:

Հ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից ճանապարհաշինության գծով 2015թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

| Հ/ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ | Կատարվել է առ | Ծանոթու- |
|----|----------------------------|------------|---------------|----------|
|----|----------------------------|------------|---------------|----------|

| Հ | | (ճշտված) | 01.07.16թ հազ.դրամ | այդ թվում՝ հրատապ ծրագրով | թյուն |
|------------|---|----------------------|-----------------------|---------------------------------|-------|
| | Ընդամենը մարզում՝ | 18,586,650.00 | | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 231,500.00 | 0,00 | | |
| | ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ | | | | |
| II | ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | |
| III | ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ. ԴՈՆՈՐՆԵՐ | | | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 355,150.00 | 114,063.00 | | |
| | Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում | 280.000.0 | 81.380.00 | | |
| | Սպիտակ | 15,100.00 | 6.660.00 | | |
| | Գուգարք | 15,100.00 | 6.551.00 | | |
| | Տաշիր | 13.500.00 | 6.179.00 | | |
| | Ստեփանավան | 15.100.00 | 6.525.00 | | |
| | Թումանյան | 16.350.00 | 6.768.00 | | |
| V | Այլ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | 18.000,000.00 | 0.0 | | |

2016թ. ճանապարհաշինության ոլորտում համաձայն մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով պահանջվող գումարը եղել է **2,218,000.0հազ.դրամ**, սակայն նախատեսվել է կատարել **18,586,650.00 հազ.դրամ** ծավալով աշխատանքներ:

2016թ. առաջին կիսամյակում մարզի ճանապարհաշինության ոլորտում համայնքային բյուջեով իրականացվել է **11,063.00 հազ.դրամի** աշխատանքներ:

5.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնկառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ:

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որոնք ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի

ջրային ցանցի երկարությունը 3395.23 կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անմխիթար, մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանով ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է 1001.782 մլն դրամ:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանով ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է **1.916.781.00 հազ դրամ** սակայն պլանավորվել է կատարել **2,949,200.00 հազ.դրամ** ծավալով աշխատանքներ: 2016թ-ի առաջին կիսամյակում փաստացի իրականացվել է **370,800.00 հազ.դրամ** ծավալով աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **2,000.0 հազ.դրամ** (Ախթալա համայնքի ջրամատակարարման եւ ջրահեռացման ոլորտի բարելավում): Միջազգային կազմակերպությունների միջոցով իրականացվել է շուրջ **368,800.00 հազ.դրամի** աշխատանքներ:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աղյուսակ 5.2.2
հազ.դրամ

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2016թ. ՏԱՊ (ճշտված) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|------------|--|------------------------|-----------------------|---------------------------------|--------------|
| | | | 01.07.16թ հազ.դրամ | այդ թվում՝ հրատապ ծրագրով | |
| | Ընդամենը մարզում՝ | 2,949,200.00 | 370,800.00 | | |
| I | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 1,332,000.00 | 2,000.00 | | |
| | Ախթալա համայնքի ջրամատակարարման եւ ջրահեռացման ոլորտի բարելավում | 2,000.00 | 2,000.00 | | |
| II | ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | |
| III | ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ., ԴՈՆՈՐՆԵՐ | 1,617,200.00 | 368,800.00 | | |
| | Դսեղ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 454,600.00 | 138,000.00 | | |

| | | | | | |
|-----------|---|------------|------------|--|--|
| | Ճոճկան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 290,700.00 | 30,300.00 | | |
| | Մեծ Այրում համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 209,600.00 | 27.100.00 | | |
| | Կաթնաջուր համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 179,800.00 | 170,900.00 | | |
| | Կաթնաջուր համայնքի արևային էներգիայով ջրատաքացման համակարգերի տեղադրում | 2,500.00 | 2,500.00 | | |
| IV | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | | | | |
| V | ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ | | | | |
| VI | ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | |

5.3. Գազամատակարարում

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախաապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12 մ³ վառելիքայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող պրոբլեմների լուծմանը: Ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2016թ. գազաֆիկացման ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **589,000.0 հազ. դրամ**, փաստացի պլանավորվել է 589,000.0 հազ. դրամ:

2016թ.-ին գազաֆիկացման աշխատանքներ չեն իրականացվել:

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են գազամատակարարման աշխատանքներ՝ **35.2** մլն. դրամ ընդհանուր արժեքով.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ծրագրով իրականացվել են.

Նշված ծրագրով մասնաճյուղի սպասարկման տարածքի Վանաձոր և Սպիտակ համայնքներում իրականացվել են միջին և ցածր ճնշման գազատարերի վթարային հատվածների վերատեղադրման աշխատանքներ՝ **4.7** մլն. դրամ գումարով:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ.

Բնակիչ-բաժանորդների ներտնային գազահամակարգերում թվով 591 անվտանգության սարքերի տեղադրում՝ **18.3** մլն. դրամ:

Թվով 2 ՌԳ մակնիշի գազահաշվիչները 'Kypc-01' մակնիշի անդրաձայնային գազահաշվիչներով փոխարինում՝ **2.3** մլն. դրամ: Բաժանորդների **6.2**

մլն. դրամ ֆինանսավորմամբ գազաֆիկացվել են թվով 149 բնակարաններ եւ առանձնատներ:

Բաժանորդների 3.5 մլն. դրամ ֆինանսավորմամբ գազաֆիկացվել են թվով 16 հիմնարկ-ձեռնարկություններ:

ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի 200 հազ. դրամ ֆինանսավորմամբ ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի միջոցով իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Ուոռուտ համայնքի առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպություն՝ «Ուոռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի գազաֆիկացման աշխատանքները:

5.4 Էներգամատակարարում

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.06.2016թ. դրությամբ առկա է շուրջ 95 251 բաժանորդ: 2016թ.-ի 5 ամիսների ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 12828.7 հազ. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 8189.7 հազ. կՎտժ-ը բնակչությանը:

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 39 597 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Լոռի Բերդ, Ագարակ, Բազում, Ազնվաձոր, Սպիտակ, Մեծավան, Մեղվահովիտ, Այգեհատ և Թեղուտ համայնքների համայնքապետարանների 39 197 հազ. դրամ ֆինանսավորմամբ իրականացվել են համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և բարելավման աշխատանքներ:

Ագարակ համայնքի ղեկավարի 400 հազ. դրամ ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության բարելավման աշխատանքներ:

2016թ. 5 ամիսների ընթացքում մատակարարված էլ.էներգիայի համար անհրաժեշտ էր գանձել 3771392.2 հազ.դրամ, փաստացի գանձվել է 3653358.6 հազ. դրամ, (96.8%):

✓ **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հայտնում եմ.

1. Մարզպետարանի աշխատակազմի 19 քաղաքացիական ծառայողներ մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

2. Պարբերաբար կազմակերպվել են մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, և բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ու բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

3. Համայնքների ղեկավարների կողմից 2015 թվականի բյուջեների կատարման հաշվետվությունները ավագանու հաստատմանը ներկայացնելու ժամանակ մարզպետը, մարզպետի տեղակալները, մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները ընտրանքային կարգով մասնակցել են համայնքների ավագանու նիստերին:

4. Կարևորվել է մարզային խորհրդի դերի բարձրացումը, հաշվի առնելով, որ այն կարևոր հարթակ է մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման համար: Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցել են մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորված ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

5. 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է մարզպետարանի ինտերնետային կայք էջի թարմացման աշխատանքները, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքների ավագանիների որոշումները, համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները: Հանրային քննարկում ապահովելու նպատակով մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել են օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր:

6. Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել բոլոր համայնքների աշխատակազմերի համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովվածության խնդրի լուծման, համայնքների կողմից համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրման, մարզպետարանի և մարզի բոլոր համայնքների միջև էլեկտրոնային կապի որակի բարձրացման ուղղությամբ, շարունակվել են մարզպետարանի և մարզի համայնքների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ ՀԿՏՀ-«Mulberry» համակարգի ներդրման, մարզի համայնքապետարաններում ինտերնետային կայքէջերի ստեղծման և դրանց կանոնավոր գործունեության ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

7. Ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, որպեսզի այդ տախտակների վրա պարբերաբար տեղադրվեն համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները, ինչպես նաև այլ կարևոր բնույթի տեղեկատվություն:

8. Առաջին կիսամյակի ընթացքում մարզի 18 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն:

9. Խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին՝ աշխատակազմերի արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ ունենալու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ:

10. Ուշադրություն է դարձվել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի, համայնքային բյուջեների կազմման, բյուջեների և զարգացման ծրագրերի կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա և տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովման նպատակով կազմակերպվել են հանրային բաց լսումներ և քննարկումներ:

11. Հաշվի առնելով ՏԻՄ-երի կարիքները՝ մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն:

12. Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և նրանց աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Իրականացվել են բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների տեղական ինքնակառավարման

մարմինների գործունեության վերլուծություններ և արդյունքները քննարկվել են մարզպետի տեղակալների կողմից անցկացված խորհրդակցությունների ժամանակ:

13. Շարունակվել են համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների պետական գրանցումների աշխատանքները:

14. Համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների և համայնքապետարանների հետ հավաքագրվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի «ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով ՀՀ համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 54-Ա հրամանով հաստատված ձևաչափերին համապատասխան ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների տեղեկատվական բազան:

15. Մարզպետի որոշումով նշանակվել և անցկացվել են ՏԻՄ-երի հերթական ընտրություններ 5 համայնքներում, որից՝ Սարչապետ և Սարամեջ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Սպիտակ, Դաշտադեմ և Խնկոյան համայնքներում համայնքի ղեկավարի: Անցկացվել են Թումանյան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Մղարթ և Դարպաս համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ:

16. Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 70 մրցույթներ, որոնցից կայացել են 38-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 50 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 47-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված 39 մասնակիցներից 38-ը նշանակել են թափուր պաշտոններում:

17. Կազմակերպվել են մարզի համայնքների քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի 8 համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքները:

18. Համայնքներում գույքահարկի վարման բազաների ճշգրտման և հաշվառման աշխատանքներին աջակցելու նպատակով յուրքանչյուր ամիս համայնքների ղեկավարներին է տրամադրվել համայնքներում հաշվառված և հաշվառումից հանված փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկատվությունը:

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության շրջանակներում 2016թ 1-ին կիսամյակում մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում:

Միջազգային համագործակցության ոլորտում Լոռու մարզը հաջողությամբ իրականացրեց նոր նախաձեռնություն՝ համագործակցության հիմք դնելով Շվեդիայի Ուփսալա նահանգի եւ Լոռու մարզի միջեւ: Շարունակվում է սերտ համագործակցությունը Ֆրանսիայի ՊԱԿԱ, Ռիոն Ալպ ռեգիոնների, Բելառուսի Վիտեբսկ եւ Վրաստանի Աջարիա շրջանների հետ:

- ✓ Միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում մայիսի 31-ից հունիսի 1-ը Շվեդիայի Ուփսալա նահանգի նահանգապետ Պիտեր Էգարդտի հրավերով պաշտոնական այցով Շվեդիայում էր գտնվում ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվեց Լոռու մարզի և Ուփսալայի նահանգի իշխանությունների միջև համագործակցության վերաբերյալ

փոխընթացման հուշագիր, որով նախատեսվում է երկու մարզերի միջև համագործակցության խթանում լավագույն փորձի և գիտելիքների փոխանակման, կառավարման, գործարարության, բնապահպանության, մշակույթի, կրթության և զբոսաշրջության ոլորտներում մարզերի հաստատությունների միջև բարեկամական կապերի, տեղական ինքնակառավարման մարմինների միջև շփումների և փոխանակումների խրախուսման ծրագրերի միջոցով:

- ✓ Լոռի-Շանսի համագործակցության ակտիվացման համար Չինաստանի Շանսի նահանգին հղվել են 2 հրավերներ 2016 թվականի ամռանը Լոռու մարզ այցելելու առնչությամբ: Նախատեսվում է գործարարների ներգրավում Չինական պատվիրակության կազմում: Այցի հետ կապված կազմակերպչական հարցերով զբաղվում են Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը եւ Չինաստանում Հայաստանի դեսպանատունը:
- ✓ Հայ-իրանական համագործակցության շրջանակներում Լոռի մարզ այցելության հրավեր է հղվել Իրանի Հորմոզգանի եւ Իսֆահանի նահանգապետերին: «Նավիդ Ռավեշ Սեփահան» կազմակերպության հետ համագործակցության առաջարկության է ներկայացվել ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից Մեծ Այրում, Պարնի, Լուսաղբյուր, Սարալանջ, Շնող համայնքներում ներդրումային ծրագրեր իրականացնելու համար:
- ✓ Հայ-Ռուսական համագործակցության շրջանակներում նախատեսվում է կազմակերպվելիք 5րդ Հայ-Ռուսական միջտարածաշրջանային համաժողովին մասնակցել հետեւյալ բնագավառներում՝ գյուղատնտեսության ոլորտ, կրթության ոլորտ, զբոսաշրջության ոլորտ, էներգետիկայի ոլորտ:

Հայ - Ֆրանսիական համագործակցություն

ՊԱԿԱ-Լոռի 2015-2017թթ համագործակցության համաձայնագրով նախատեսվում է ընդհանուր 451 000 եվրոյի աշխատանքների իրականացում. ընդ որում՝ վերջիններիս մի մասը ուղղված է մարզում տուրիզմի եւ ագրոտուրիզմի զարգացմանը:

Նախատեսվում էր Ախթալայում հիմնել թանգարան եւ Ֆրանսիայից ժամանած մասնագետները 2015-ին իրականացնելով համապատասխան ուսումնասիրություններ՝ 2016-ին ներկայացրին թանգարանի հիմնման նախագիծը:

Ագրոտուրիզմի զարգացման ծրագրի շրջանակներում Ֆրանսիայում վերապատրաստում անցած 8 մասնագետները 2016 թվականի ապրիլին Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում անցկացրեցին վերապատրաստման 2-օրյա դասընթաց ֆերմերների պիլոտային խմբի համար: Ապրիլի 12-ից 13-ը կայացած դասընթացին մասնակցեց նաեւ ՊԱԿԱ/CRIPIT-ի ագրոտուրիզմի գծով էքսպերտ Միրիամ Բորելը: Ֆերմերների պիլոտային խմբի կողմից առաջարկվել է հիմնել ասոցիացիա ագրոտուրիզմի զարգացման աշխատանքների համակարգման եւ ֆերմերների շահերի պաշտպանության համար: Ըստ այդմ՝ Լոռու տուրիզմի զարգացման հիմնադրամին կից հիմնվել է Լոռի ագրոտուր ասոցիացիան (ԼԱՏԱ):

ՊԱԿԱ ռեգիոնը Ուսանողական գարուն փառատոնի շրջանակներում հյուրընկալել է Լոռու երիտասարդ դպրոցականների պատվիրակություն Սպիտակից:

Ալավերդիում ֆրանսիայից դասախոսի եւ փարձագետի ուղեկցությամբ ժամանած 3 երիտասարդ ուսանողների կողմից ապրիլին անցկացվել են համապատասխան ուսումնասիրություններ ռաֆթինգի ծրագրի շրջանակներում ժամանման

գոտու/կայանատեղու կարգավորման ուսումնասիրությունների համար: Սեպտեմբերին 6 երիտասարդ ֆրանսիացի ուսանողներ կժամանեն համապատասխան վայր՝ դասախոսների եւ Ալավերդու քոլեջի ուսանողների հետ տարածքը կարգավորելու համար:

Ընթացքի մեջ է նաեւ «<Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցություն>> ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է Լոռու մարզում զարգացնել ոչխարաբուծությունը և բարձրացնել անասնազխաքանակի մթերատվությունը:

✓ Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամսյակի շրջանակներում, մարտ ամսից Լոռու մարզի կրթական եւ մշակութային հիմնարկություններում կազմակերպվել են Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, ֆիլմերի դիտումներ, դասախոսություններ, ցուցադրություններ, պոեզիայի ընթերցումներ ու ֆրանսիական երգերի կատարումներ, տոնական համերգներ եւ գրական երաժշտական ցերեկույթներ:

ԵՄ և այլ դոնոր կառույցների կողմից իրականացվող ծրագրեր

✓ «ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագիր» շրջանակներում Դիլիջան քաղաքում տեղի ունեցավ Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրի ղեկավար խորհրդի նիստ՝ ղեկավարությամբ ՀՀ ՏԿԱԻ 1-ին փոխնախարար Վ.Տերտերյանի: Հայաստանյան խմբում ընդգրկված էր նաեւ Լոռու մարզպետարանի ներկայացուցիչը: Հանդիպման նպատակն էր ծրագրերի առաջընթացի գնահատումը:

✓ «Տարածաշրջանային կարողությունների կառուցման» ծրագրի (ECORIS) շրջանակներում իրականացվել են ՄԶԾ-ների ոլորտային աշխատանքային խմբերի ներկայացուցիչների եւ մարզպետարանների զարգացման ծրագրերի եւ վերլույթային բաժինների աշխատակիցների վերապատրաստումներ:

✓ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում 2016 թվականի 1-ին կիսամյակում տրամադրվել են դրամաշնորհներ 17 կանանց բիզնեսի հիմնադրման կամ ընդլայնման համար: Կազմակերպվել են 6 Կլոր սեղան քննարկումներ Լոռու մարզում կանանց ձեռներեցության խթանման և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման թեմաներով: Կազմակերպվել է նաեւ ԷԲՍՊՈ և Աշխատանքի տոնավաճառ Վանաձորի զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ: Կայացել են նաեւ ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված դասընթացներ և հեռուստահաղորդումներ հարկային վարչարարության, հաշվապահական հաշվառման, և աշխատանքային օրեսագրի թեմաներով:

✓ «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագրի շրջանակներում Լոռու մարզի մոտ 400 բնակիչներ մասնակցել են գյուղատնտեսության և սննդի վերամշակման ոլորտի դասընթացներին: Միևնույն ժամանակ իրականացվել են բիզնեսի կառավարման և զարգացման դասընթացներ, որի արդյունքում 13 գործարարներ ստացել են դրամաշնորհներ՝ բիզնեսի կայացման և զարգացման համար: Իրականացանող կազմակերպությունը Ժողովուրդների Զարգացման Միջազգային կոմիտե (CISP) իտալական ՀԿ-ն:

Ընթացքի մեջ գտնվող 13 դրամաշնորհային բիզնես ծրագրերին տրամադրվել է 722,386,96 եվրոյի չափով դրամաշնորհ:

Դրանք են՝

Վանաձոր համայնքում՝ 2 ծրագիր՝ ճագարաբուծություն,
Գուգարք համայնքում՝ 1 ծրագիր՝ ձկնաբուծության,
Արջուտ համայնքում՝ 1 ծրագիր՝ անասնապահություն և կաթնարտադրություն,
Դսեղ համայնքում՝ 1 ծրագիր՝ անասնապահություն,
Ջրաշեն համայնքում՝ 1 ծրագիր՝ խոզաբուծություն, 1 ծրագիր՝ բրոկոլիի արտադրություն,
Վանաձոր համայնքում՝ 3 ծրագիր՝ կաթնամթերքի և պանրի արտադրություն, 1 ծրագիր՝ թթու պահածոների արտադրություն, 1 ծրագիր՝ կիսաֆաբիկատների արտադրություն, 1 ծրագիր՝ մեղրի և գինու արտադրություն:

Նշված 13 բիզնեսների շարքում հիմնադրվել է նաև մեկ կոոպերատիվ՝ Արջուտ համայնքում: Կոոպերատիվն ունի 47 անդամներ և գործում է անասնապահության և կաթնարտադրության ոլորտում:

- ✓ Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ Կազմակերպությունը իրականացրել է 85500 եվրո արժողությամբ աշխատանքներ մարզի 10 դպրոցներում:
- ✓ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի (ENPARD) Հայաստանի «Արտադրող խմբերի և արժեշրթանների զարգացում» տեխնիկական աջակցության բաղադրիչն իրականացվում է Հայաստանում Միացյալ ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության/ՄԱԱԶԿ-ի (UNIDO) և Միացյալ ազգերի զարգացման ծրագրի/ՄԱԶԾ-ի (UNDP) կողմից:

ՄԱԶԾ/UNDP-ն աշխատում է առաջնային արտադրության խմբերի և կոոպերատիվների հետ՝ աջակցելով նրանց ձևավորմանն ու զարգացմանը, մինչդեռ ՄԱԱԶԿ/UNIDO-ն պատասխանատու է վերամշակման կոոպերատիվների աշխատանքին աջակցելու և արժեշրթանների զարգացման համար:

2016-ին՝ Ծրագրի իրականացման երկրորդ տարում ՄԱԶԾ բաղադրիչի շրջանակում թվով 41 առաջնային արտադրության խմբեր մշակել և ներկայացրել են իրենց գործնական ծրագրերը (34-ը՝ հնդկացորենի, 4-ը՝ ոչ-ավանդական բանջարեղենի և 3-ը՝ մրգի ու հատապտուղների): Խմբերում ընդգրկված են ավելի քան 600 ֆերմերներ: Առաջնային արտադրությամբ զբաղվող յուրաքանչյուր խումբ ENPARD ծրագրի կողմից ստանում է անհրաժեշտ նյութեր (սերմ, պարարտանյութ, տնկիներ) և սարքավորումներ (տեխնիկա, գործիքներ):

ՄԱԱԶԿ/UNIDO բաղադրիչի շրջանակում կառուցվում են հնդկացորենի մշակման 2 գործարան, որտեղ 34 առաջնային արտադրության խմբերը վերամշակելու են իրենց արտադրանքը: Շահագործման է հանձնվելու բարձրարժեք պանրի մշակման 6 արտադրամաս ներքին և արտաքին շուկաներում տարբեր տեսակի պանիրներ (Գաուդա, կապույտ պանիր և ոչխարի պանիր) վաճառելու նպատակով, ինչպես նաև կառուցվում է չրի և խոտաբույսերի 6 արտադրամաս, որոնց աշխատանքի հիմքում ընկած է փակ արտադրական ցիկլի մեթոդաբանությունը և առաջավոր տեխնոլոգիաների՝ այդ թվում էլեկտրական չորանոցների կիրառումը:

Լոռու մարզում ստեղծվել են հետևյալ 8 խմբերը, որոնք որպես կոոպերատիվ գրանցման փուլում են. Լեռնանցք՝ հնդկացորեն, Մեծ Պարնի՝ հնդկացորեն, Կուրթան՝ միրգ/հատապտուղ (ազնվամորի), Մեծ Այրում՝ Միրգ/հատապտուղ (մրգատու այգիների

համար գյուղտեխնիկական աջակցություն), Բովաձոր՝ Բարձրաթեք բանջարեղեն (բրոկկոլի), Գարգառ՝ Բարձրաթեք բանջարեղեն (բրոկկոլի), Կողես՝ Բարձրաթեք բանջարեղեն (բրոկկոլի), Վարդաբլուր՝ Բարձրաթեք բանջարեղեն (բրոկկոլի):

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ գյուղատնտեսության կայուն զարգացման նպատակով:

- ✓ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրն իրականացնում է «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն Սպիտակ եւ Վայք քաղաքներում: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Սպիտակի համայնքապետարանի մասնագետներ, բնակչության շրջանում իրազեկում կազմակերպելու նպատակով անց են կացվել էներգիայի օրեր միջոցառում եւ հանդիպումներ, կազմվել է վերանորոգվող շենքերի վերանորոգման նախագծերը: ԵՄ ֆինանսական ներդրումը կազմում է 807,256 եվրո, իսկ Սպիտակի համայնքապետարանինը՝ 192,375 եվրո: Ծրագիրը ենթադրում է 27 բազմաբնակարան շենքերում էներգիայի խնայողության մոդելների կիրառում՝ ջերմամեկուսացում, արեւային մարտկոցների տեղադրում, տանիքների եւ մուտքերի դռների փոխարինում:
- ✓ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի ֆինանսավորմամբ իրականացվում է «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգում»՝ 2155.1մլն դրամ պայմանագրային արժեքով: Կապալառու կազմակերպություններ՝ «Ախուրյանի Կոպշին ՍՊԸ և «Ագաթ-777»ՍՊԸ: Աշխատանքները սկսվել են 2015թ. և կավարտվեն 2016թ.:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

✓ Լոռու մարզպետարանի և «Դիակոնիա» հիմնադրամի միջև համագործակցության հուշագիր ստորագրվեց: Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը և հիմնադրամի տնօրեն Պարույր Զամբազյանը համագործակցության հուշագիր ստորագրեցին՝ պարտավորվելով առաջիկա երկու տարիներին առավել բազմաբովանդակ ծրագրեր իրականացնել: Դիակոնիա» հիմնադրամը Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ բազմաթիվ բարեգործական ծրագրեր է իրականացնում մարզում՝ նպաստելով բնակչության սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավմանը և բարեկեցության ապահովմանը:

Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին կատարվել է ներդրում 7.9 միլիոն, որը տրամադրվել է հակատուբերկուլյոզային մասնաշենքի վերանորոգմանը: Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի միջոցներով իրականացվել է նաեւ Շենավանի բուժականակաբարձական կետի կապիտալ վերանորոգումը՝ մոտ

✓ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը 2011թ.-ից իրականացնում է «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիրը, որի շրջանակներում հիմնվել են 19 դպրոցահեն նախակրթարաններ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի գյուղական համայնքներում, վերանորոգվել են դպրոցների սանհանգույցները, բարելավվել են սանիտարա-հիգիենիկ պայմանները և դպրոցի աշակերտներին ուսուցանվել է առողջ սնունդ, հիգիենա և առողջ ապրելակերպ թեմաները:

✓ Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) բարեգործական կազմակերպությունն ընդլայնում է գործունեությունը մարզի համայնքներում. ներկայումս շահառու համայնքներն

են Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Վահագնի, Դեբեդ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Անտառամուտ, Մեծ Այրում, Արեւածագ եւ Աքորի համայնքները:

✓ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից Դսեղ-Դեբեդ համայնքների ճամփաբաժանի հարակից տարածքում (հարավային կողմում) կառուցվում է Սմարթ Կենտրոն, որը բարձր տեխնոլոգիաների և լավագույն փորձառության վրա հիմնված մեթոդների միջոցով կրթական-զարգացողական հնարավորություններ է ստեղծելու տարածաշրջանի համայնքների բնակչության համար: Հայաստանի մանուկներ հիմնադրամի /COAF/ ֆինանսավորումը շինարարության ուղղությամբ կազմում է 960.0 հազ. դոլար, կապալառու կազմակերպությունը «Կանակա»ԲԲԸ-ն է: Շինարարական աշխատանքները սկսվել են 2015թ. հոկտեմբերից և կավարտվեն 2016թ. վերջին: ՍՄԱՐԹ ավանը, հիմնված ՍՄԱՐԹ կենտրոնի վրա ծրագրի արժեքը 3,0 մլն դոլար է, որի անբաժանելի մասն են կազմում բուժկետը, երեխայի խնամքի ցերեկային կենտրոնը, հյուրատունը, արվեստանոցները, սպորտային հրապարակները, ջերմոցները և մի շարք այլ կառույցներ՝ 7,2 հա տարածքի վրա:

✓ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի /UNICEF/ և «World Vision» կազմակերպության կողմից մի շարք առողջապահական ընկերություններում /«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ, «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Մարգահովտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ, «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ, «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ, «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Վարդաբլուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՀՈԱԿ, «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Կուրթանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ/ ստեղծվել են Ծնողական կրթության կենտրոններ և Մայրության դպրոցներ, որոնք ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են: Ստեղծված ծնողական կրթության կենտրոններում նշանակվել են աշխատանքները համակարգող պատասխանատու բուժաշխատողներ և իրականացվում են թեմատիկ դասընթացներ և խորհրդակցություններ:

✓ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ «Տեղական սոցիալական պլանավորում և սոցիալական ծառայությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալցում. Սոցիալական արձագանք աշխատանքային միգրացիայի» ծրագրի շրջանակներում իրականացվել է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև համագործակցության իրականացման պիլոտային ծրագիր, որի թիրախն էր երեխայի՝ խնամքի սոցիալական հաստատություններում (ընդհանուր տիպի մանկատներ, մասնագիտացված մանկատներ, բարեգործական մանկատներ, խնամքի հաստատություններ, հատուկ դպրոցներ և այլն) տեղավորելու կանխարգելումը:

Ծրագրում ընդգրկվել են Վանաձորի և Գուգարքի տարածաշրջանի 3 դեպք վարողներ:

✓ «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ կազմակերպության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ Հովանավորչական Ծրագրի շրջանակներում համայնքներում իրականացրած միջոցառումներ երեխաների համար, երեխաների պաշտպանության և կրթության ծրագիր (երեխաների իրավունքների ու

պարտականությունների, զարգացնող և այլ կրթող դասընթացներ, աջակցություն անապահով ընտանիքներին), Առողջապահական ծրագիր (ամբուլատորիաների վերանորոգում, բժշկական պարագաների հատկացում, դասընթացների կազմակերպում և իրականացում), Երիտասարդների զարգացում, «Տնտեսական զարգացման» տեղական արժեշղթայի զարգացում ծրագիր եւ Հումանիտար աջակցություն ծրագիր Ալավերդու եւ Ստեփանավանի տարածաշրջաններում, ինչպես նաեւ «Զբոսաշրջության զարգացման և երիտասարդների ձեռներեցության» ծրագիր Ալավերդու տարածաշրջանում: Ծրագրերի ընդհանուր արժողությունը կազմում է 106 590 300 ՀՀ դրամ:

Լոռու մարզպետարանի և «Վորլդ Վիժն» բարեգործական կազմակերպության միջև կնքվել է հուշագիր մարզում ծրագրեր իրականացնելու նպատակով:

Նշենք, որ Վորլդ Վիժն Հայաստան ՄԲԿ-ի կողմից 2015-ին Լոռու մարզում 198 726 281 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր են իրականացվել սոցիալական, տնտեսական, կրթության, առողջապահության, երեխաների պաշտպանության, տուրիզմի և երիտասարդների ձեռներեցության զարգացման ոլորտներում:

✓ ԱՐԴԻ ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից և իրականացնող կազմակերպություններն են՝ Հայաստանի Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը և Հեյֆեր Փրոջեք Ինթերնեյշնլ Հայաստանյան մասնաճյուղը: ԱՐԴԻ (Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնություն) ծրագրի կողմից Լոռու մարզում իրականացվում են հետևյալ ծրագրերը՝ Լորուտ (համայնքի ներդրում՝ 768 700 դրամ, 5 088 780 դրամ է ծրագրի ընդհանուր բյուջեն), Շամուտ (համայնքի ներդրում՝ 232 600 դրամ, 3 040 090 դրամ բյուջե), Աթան (համայնքի ներդրում՝ 756 000 դրամ, 4 901 640 դրամ բյուջե), Կաթնաջուր (համայնքի ներդրում՝ 1 615 000 դրամ, 9 946 740 դրամ է բյուջեն), Ծաղկաբեր (համայնքի ներդրում՝ 2 040 000 դրամ, 12 757 162 դրամ է բյուջեն) եւ Լուսաղբյուր (համայնքի ներդրում՝ 1 252 000 դրամ, 12 158 008 դրամ է բյուջեն) համայնքների արոտավայրերում անասունների ջրախմոցների կառուցում: Ճոճկան համայնքում իրականացվում է ոռոգման ջրագծի վերանորոգում, համայնքի ներդրում՝ 2 074 000 դրամ, 10 959 432 դրամ բյուջե:

✓ Ավարտվում է «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մարզային ակնաբուժական կենտրոնի ստեղծումը, որի բացումը նախատեսված է 2016թ. հունիսի 27-ին: «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ներդրումը կազմել է մոտ 42000.000 դրամ:

✓ Ֆոկուս Օն Զիլդրն կազմակերպության (1,5 մլն դրամ) եւ Սպիտակի համայնքապետարանի (1 մլն դրամ) ֆինանսավորմամբ եւ համագործակցությամբ իրականացվել է Թիվ 2 ՆՈՒՀ խաղահրապարակի կառուցման ծրագիրը: ՆՈՒՀ-ի մասնաշենքի ներսում կառուցվել է 3 աշտարակով խաղահրապարակ:

✓ "Կամրջակ" ՄԲԿ-ն ֆինանսավորում եւ իրականացնում է "Սննդօգնության" ծրագիր, որի շրջանակներում 165 շահառուներ ապահովվել են սննդով: Ծրագիրը միտված է անապահով, խիստ կարիքավոր ընտանիքների սոցիալական իրավիճակի բարելավմանը:

✓ Ասիական զարգացման բանկի 18 000 մլն. դրամ ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 38.5 կմ հատվածի վերականգնում ու բարելավում:

Ասիական զարգացման բանկի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերով 2016 թվականին նախատեսվել է 739 մլն դրամ արժողությամբ աշխատանքների իրականացում «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համակարգի բերելավման ուղղությամբ: Նշենք , որ ծրագրի շրջանակներում «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 սպասարկվող համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ

ջրահեռացման համակարգերի բարելավման համար նախատեսվել էր 1.311.14 մլն դրամ: ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO)՝ Ավստրիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, իրականացնում է «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար. աջակցություն երիտասարդ ձեռներեցներին» ծրագիրը:

✓ ՀՀ կառավարության կողմից ծրագրի հիմնական գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ծրագրի իրականացնող գործընկերը՝ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ): 2013-թ.-ից մինչև 2016թ.-ի հունիսի 30-ը ծրագրի շրջանակներում Լոռու մարզում կազմակերպվել է 6 CEFЕ դասընթաց: Դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցել է 90 երիտասարդ: Դասընթացի ավարտից ներկայացված բիզնես պլանների հիման վրա 45 երիտասարդ ձեռներեց հաստատվել է վարկ ստանալու համար: 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 19-ը երիտասարդ ձեռներեցի հատկացվել է վարկ՝ 63 994 800 մլն դրամի չափով, 10-ը ընթացքի մեջ է:

✓ ՀՀ եւ վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի եւ Սպիտակի համայնքապետարանի ֆինանսավորմամբ իրականացվել են Սպիտակի համայնքապետարանի էներգախնայողության միջոցառումներ. փոխարինվել են Սպիտակի համայնքապետարանի շենքի պատուհանների ու ջեռուցման համակարգը: Իրականացնող կողմերը Սպիտակի համայնքապետարանն ու Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամն են: Աշխատանքները ավարտվել են 24.06.2016:

✓ Լոռու մարզի Թումանյան համայնքում ԳՄՀԸ-ի աջակցությամբ ապրիլի 26-28-ը անցկացվեց «Մասնակցային պլանավորման տեխնոլոգիաներ դասընթացը»: Դասընթացն անցկացվում է համայնքների խոշորացման քաղաքականության շրջանակներում որպես համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության միջոցառումների բաղադրիչ մաս:

Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ)՝ ԳՄՀԸ-ի ֆինանսավորմամբ իրականացնում է «Մոդելային համայնքներում արդյունքահեն բյուջետավարման ներդրում» ծրագիրը, որի շրջանակներում կազմվել են ծրագրի շրջանակներում ընդգրկված պիլոտային համայնքների 2016թ. բյուջեները արդյունքահեն ձևաչափով և արդյունքահեն բյուջեների հակիրճ տարբերակները: Լոռու մարզից ծրագրի պիլոտային համայնքներն են եղել Թումանյան, Ալավերդի, Սպիտակ և Օձուն համայնքները: Կազմակերպվել և անց է կացվել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում արդյունքահեն բյուջետավարման մեթոդաբանության երկօրյա ուսուցում Թումանյան համայնքի համար: «Բազմաբնակավայր համայնքի զարգացման քառամյա ծրագրի (ՀՋԲԾ-ի) կազմման և կառավարման մեթոդաբանության կիրառման վերաբերյալ ուղեցույցի մշակում և ուսուցում, Երկու խոշորացվող պիլոտային փնջերի համար (Թումանյան, Տաթև) ՀՋԲԾ-ի հիմնական ցուցանիշների փորձագիտական կանխատեսումների մշակում» ծրագրի շրջանակներում մշակվել և քննարկվել են խոշորացված Թումանյան փնջի ՀՋԲԾ-ի հիմնական ցուցանիշների փորձագիտական կանխատեսումները:

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ընդամենը Լոռու մարզում 2016թ. 1-ին կիսամյակում թվով 9 համայնքների կողմից կատարվել է 19.154.600 դրամի արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքներ:

Այլ և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքներ

1. ԱՌՆԱՊ-ի և փոքր ու միջին ծրագրերի զարգացման գրասենյակի կողմից Արդվի և Օձուն ամայնքներում աղետների ռիսկերի գնահատում – դրամ;
2. Հայկական Կարմիր Խաչի կողմից
 - 1) Օձուն, Սարչապետ, Մարգահովիտ և Մեծ Պարնի համայնքների թվով 60 ուսուցիչների հետ դասընթացներ՝ «Անվտանգության վարքականոնների ուսուցում, տարահանման հիմունքներ և 1-ին օգնություն» թեմայով – դրամ
 - 2) Սարչապետ, Օձուն, Մարգահովիտ և Մեծ Պարնի համայնքների արձագանքման թիմերի ուսուցում – դրամ

2013 – 2016 թթ ընթացքում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՀՀԳ) հետ իրականացվեց «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Երևանում, Լոռու, Տավուշի, Սյունիքի և Շիրակի մարզերում ստեղծվեցին քաղաքային որոնողափրկարարական թիմեր, որոնք հագեցվեցին ժամանակակից գույք – սարքավորումներով (95 անվանում): Նմանատիպ գույք – սարքավորումներ տրամադրվեց նաև ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ին՝ փրկարարների վերապատրաստման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Նշված թիմերի անձնակազմերի հետ անցկացվեցին համապատասխան վերապատրաստման դասընթացներ:

Ծրագրի իրականացման շնորհիվ Լոռու, Տավուշի, Սյունիքի և Շիրակի մարզերում ստեղծված քաղաքային որոնողափրկարարական թիմերը հնարավորություն ստացան որակավորվել որպես ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան քաղաքային որոնողափրկարարական միջին թիմեր, իսկ Երևանի քաղաքային որոնողափրկարարական թիմը անցավ արտաքին որակավորում:

Ծրագրի ավարտին 2016 թվականի հունիսի 5-9-ը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անցկացվեց INSARAG չափորոշիչներին համապատասխան քաղաքային որոնողափրկարարական 5 միջին թիմերի (Երևան, Սյունիք, Տավուշ, Լոռի, Շիրակ) հետ 36-ժամյա վարժանք:

Լոռու մարզի համայնքների 2016թ. բյուջեներով և այլ ծրագրերով պլանավորված կանխարգելիչ միջոցառումներ

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Անցկացման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը | Նշումներ կատարման վերաբերյալ |
|--------------------------|--|-------------------|--------------------------------|------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| I. Պետական բյուջե | | | | |
| 1. | Մ-3, Մարգարա-Վանաձոր- Տաշիր - Վրաստանի սահման /կմ 137+200-կմ 141+000 հատվածի հիմնանորոգում | 2016թ. | 82.4 մլն. դր., պետական բյուջե | |
| 2. | Մ-3, Մարգարա-Վանաձոր- Տաշիր - Վրաստանի սահման /կմ 79+000-կմ 96+400 ճանապարհահատվածի անանցանելիության ապահովում | 2016թ. | 30.0 մլն. դր., պետական բյուջե | |
| 3. | Պուշկինոյի թունելի հիմնանորոգում | 2016թ. | 200.0 մլն. դր., պետական բյուջե | |
| 4. | «Լոռու մարզի Սպիտակի քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատում | 2016թ. | 37.0 մլն. դր., պետական բյուջե | |
| II. ք. Վանաձոր | | | | |
| 1. | Անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկում | Հունվար-դեկտեմբեր | Համայնքի բյուջե 20000000 դր. | - |
| 2. | Գետերի հունների մաքրում | Մայիս-հոկտեմբեր | Համայնքի բյուջե 12000000 դր. | Կատ է |
| 3. | Անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի հիմնանորոգում | Տարվա ընթացքում | Համայնքի բյուջե 7000000 դր. | - |
| 4. | Անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկում | Տարվա ընթացքում | Համայնքի բյուջե 20000000 դր. | - |
| III. ք. Ալավերդի | | | | |
| 1. | Սարահարթ թաղամասում հենապատի վերակառուցում | III եռամսյակ | Համայնքի բյուջե 3000000 դր. | - |
| 2. | Վտանգավոր ծառերի հատում, էտում | I եռամսյակ | Համայնքի բյուջե 250000 դր. | Կատ. է |
| 3. | Երկաթգծի գծանցի հենապատի վերակառուցում | II եռամսյակ | Համայնքի բյուջե 1500000 դր. | - |
| 4. | Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում | II-IV եռամսյակ | Հրատապ ծրագիր 80000000 դր. | - |
| 5. | Սարահարթ թաղամասում վտանգավոր աստիճանների վերանորոգում | III-IV եռամսյակ | Համայնքի բյուջե 300000 դր. | - |
| IV. ք. Սպիտակ | | | | |
| 1. | Անձրևատար առուների մաքրում | 01.01.16-31.12.16 | Համայնքի բյուջե 4695600 դր. | Կատ. է |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|-------------------|--|--|--------------------------------|---------------------|
| 2. | Ձմեռային մաքրման աշխատանքներ | 01.01.16- 31.03.16 01.11.16- 31.12.16 | Համայնքի բյուջե 2498000 դր | Կատ. է 1.249.000 |
| V. գ. Լեռնապատ | | | | |
| 1. | Ճանապարհների վերանորոգման՝ սելավներից, ձյան մաքրման աշխատանքների համար | Տարվա ընթացքում և ձմռան ամիսներին | Համայնքի բյուջե 400000 դր. | Կատ. է 300.000 |
| VI. գ. Շահումյան | | | | |
| 1. | Սելավատարի և հեղեղատարի մաքրում, կեղտաջրերի հեռացում | Մարտ- մայիս | համայնքի բյուջե 600000 դրամ | 400.000 |
| VII.գ. Լերմոնտովո | | | | |
| 1. | ԱՌ կանխարգելիչ միջոցառումների համար | Մայիս- հունիս | Համայնքի բյուջե 100000 դր. | - |
| VIII. գ. Լեռնանցք | | | | |
| 1. | Սելավատարի մաքրում | Մարտ- հոկտեմբեր | Համայնքի բյուջե 50000 դր. | Կատ. է |
| IX. գ. Խնկոյան | | | | |
| 1. | Սելավատարերի կեղտաջրերի մաքրում | Ապրիլ | Համայնքի բյուջե 130000 դր. | Կատ. է |
| X. գ. Լեջան | | | | |
| 1. | Հակակարկտային ծառայության համար | Տարվա ընթացքում | 120000 դր. | Կատ. է 80.000 |

